

ՆՈՐ ԿԵԱՆՔ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

ՄԱԿԵԴՈՆԻԱՆ ԵՒ ՄԵՆՔ

Մակեդոնիոյ ներկայ խոսվութիւնը— այնքան սուր ու օպանալից—, նորութիւն մը չէ այդ գիւթական երկրի կարիճ ժողովուրդին համար, որ՝ հակառակ իր կրած ահաւոր ճնշումներուն, յամառօրէն դեռ կը պահէ իր մէջ իր ցեղային անհատականութեան ուժը և իր անկախութեան ձգտումը:

Մարդկային տարրական իրաւունքներու խեղճումին դժարձապէս արհեստագործ բողոքն է ան, զոր այնքան խիզախօրէն կը բարձրացնէ հոն ջրհասոնեայ ազգաբնակչութիւնը՝ իր զարեւոր գատը բռնի ուժով պաշտպանելու արի և անընկճելի վճռականութեամբ մը:

Քերչին տարիներս մանաւանդ, իւրաքանչիւր գաւառնի սկիզբը, Մակեդոնիան, արդարացի պահանջումներու անայլալ գիտակցութեամբ մը օպառազինուած՝ ուժգնօրէն կը հնչեցնէ իր յեղափոխական անկասելի կոխիւն շեփորը:

Ամբողջ կորովի ու շարքաշ բնակչութեան մը հոգիին մէջ պայթող զայրոյթին աղաղակն է, որ տարուէ տարի կուգայ նոր սարսուռ մը ձգել գիւնապիտական շրջանակներուն մէջ, ուր իսպառ օտակած են դժբաղգաբար Արգարութեան եւ իրաւունքի զգացումները:

Տարակոյս չիկայ որ «խաղաղութիւնը վերահաստատել» ու իր արինստ եղերբգութիւնը խաղալ պիտի ուզէ գարձեալ Ապտիւ Համիա, որ՝ բազմաթիւ գիակներու կոյտին վրայէն՝ քանի՜ անգամ յաջողած է իր կարծրած ձեռքերով թուք մը տնկել մակեդոնացիներուն՝ զէպի մեծ ու դժուարին ճամբան՝ անձնուրաց քայլերուն առջեւ:

Բիւզանդիոնի Ներոնին կանխամտածուած հրամաններուն տակ, թրջական բռնութիւնն ու աննախընթաց վայրագութիւնները՝ ամէն տարի, հազարաւոր ձեւերով, ամենէն արինսուշտ հաշվածանքներով, քոտմէլի հետքեր կը թողուն այն քաղաքներուն մէջ ուր երբեմն աստուածներն ու մուսաները կը բնակէին:

Բայց հրաբուխը չի մարիր բնաւ: Նորէն ու նորէն կը բռնկի ան, մինչեւ որ աւել տանի շղթայող, սարքակացնող զարշելի լուծը, իր բոլոր անհանգստեանի արհաւիրքներով, և մինչեւ որ, վերջապէս, Մակեդոնիան դաճնայ ազատ երկիր մը, ինքերբէն, անխտիր՝ բոլոր հոն բնակող ազգութիւններուն համար, ինչպէս կը յայտարարեն յեղափոխական վարիչները:

Անոնք որ դէպքերն ու իրողութիւնները վայրկեանական տպաւորութեան մը տակ, երեւոյթէն միայն քննել վարժուած են, անոնք՝ որ ազգերու յեղափոխական կեանքի պատմական էլեւէջներուն անտեղեակ են, մակեդոնացիներու ըմբոստութեան այս վերագարթնումը կը համարեն սովորական գարձած խօջ ու ալիւտար ցընցում մը միայն, որ կանգ պիտի առնէ դարձեալ հարիւրաւոր նահատակներու յորդաոտ արինին մէջ: Եւ յետո՞յ:— Նորէն պիտի արի ընդհանուր սարսափը պալքանեան սլաւ ազգերուն մէջ, մահիկին յաջմական ու ահարկու իշխանութեան ներքեւ:

Ուրիշ ոչինչ կը տեսնեն այլ անհունօրէն պարսպ մտքերը, որոնք չպիտի կրնան երբէք ըմբռնել, թէ հոգ՝ այդ վերանորոգուած շարժումներուն մէջ իտացած է մակեդոնացիին կենսունակութիւնը: անպարտելի արիութիւնն ու բարոյական մեծ ուժը, երեք ապահովագոյն յենարաններ, որոնց կոթնած՝ արժանաւորապէս կրնայ ազատութիւն պահանջել որ եւ է ազգ:

Ճիշդ է, թէ շատ անգամներ զարնուած ու վիրաւոր ինկած է Մակեդոնիան, որուն սրտին խորը արձագանք գտած է անգամ մը փրկութեան կոխիւն հրաւերը և որ Աղէտքէն վերջն ալ գիտէ ու կրնայ միշտ օսքի ելլել ու դարձեալ սգորել լիասիրտ ու անվկանդ հաւատքով:

Ո՛չ խմբովին բանտարկութիւնները, ո՛չ շարքերը, ո՛չ կազմակերպուած հարօտահարութիւնները և ո՛չ իսկ անյաջողութիւնները կրնան ընդհանուր վհատութեան արատով մը, պասալքութեան կեղտով մը պզտիկցնել մակեդոնացիներու հզօր ճիգը, զոր առաջ տանիլ ուխտած են ամէն գնով:

Մակեդոնացիք իրենց մէկէ աւելի զբացիներն ունին՝ միևնոյն արինսուշտ անպարէզէն անցած: Անոնք չեն մոռցած այն խժգուժ գազանութիւնները, որոնց զօհն էին երբեմն երկկուսան սարուկ ու այսօրուան ազատ

կատագիրը՝ փոթորիկներու, արհաւիրքներու վիթխարի շղթայազերծումի մը մէջէն՝ կը վերակերտուի, կը վերագարնուի ու կը ձգտի դէպի խիզախ ու յաղթական տիրացումները արդար ու բռնապատուած իրաւունքներուն: Հոյակապ, անսոսանալի, նուիրական շրջան՝ ուր ըմբոստ Հայը մէկէն՝ ամենի ու անզուսպ թափով մը ոտքի ելած՝ յեղափոխական անհաւատար կոխը կը մղէ Քոնստանտնուպոլսոյն ու մալեգնած զօրութիւններուն դէմ:

* * *

Աւ հիմա, Հայ Յեղափոխութեան այդ առաջին շրջանին դարձած, անոր արիւնզանդ ու աղետարէզ դեղեկութիւնէն անգամ մըն ալ վրդովուած, յափշտակուած՝ կ'ուզենք անկից քաղել զերագոյն ու արդաւանդ եզրակացութիւններ: Աւ կը հարցնենք.

— Կորսնցուցի՞նք, թէ շահեցանք...

— Այլանգա՛կ հարցում, պիտի պոսան, դարձէ՛ք, նայեցէ՛ք անգամ մը ձեր ետին... զեռ մթին ու սպառնալից են հօրիզոնները, զեռ արիւնը չէ՛ ցամքած հայրենի հողին վրայ, զեռ չեն՝ զոցուած վերքերը Հայութեան դաշոյնուած կուրծքին, զեռ աւերին ծուխը կը բարձրանայ Հայ քարուքանդ օճախներէն ու զեռ չեն լուծ անձկութեան ու տանջանքի ձայները մեր հեռաւոր ցաւազին եղբայրներուն...

Հարցումը կը կրկնենք.

— Հայ Յեղափոխութիւնը կորսնցուց, թէ շահեցաւ, այդ առաջին շրջանին մէջ:

— Կորսնցուց, և ահագնօրէն կորսնցուց, պիտի ըսեն բոլոր անոնք, որ մակերեւութային ու անմիջական հասկացողութիւնն ունին միայն պատմական բարձր ու սերտօրէն շղթայուած իրայայտութիւններու և սրունց պարզ ու կարծատես մտայնութիւնը չի բաւեր ընդգրկելու ընկերային երևոյթներն ու շարժումները, իրենց տիրական նկարագրին ու իրենց վճռական ու անխուսափելի հետեանքներուն մէջ:

Անոնց համար, Հայ Յեղափոխութիւնը՝ եթէ արդէն չէ մեռած՝ զոնէ մահացու կերպով վերաւոր՝ կիտածեալ կեանք մը կը քաշկոտէ, ուշ կամ կանուխ մարելու, հատնելու դատապարտուած:

Այս անհեթեթ կարծիքը երանութեամբ ընդունուած, պաշտպանուած, հոչակուած է մասնաւորապէս անոնց կողմէ, որոնք՝ յեղափոխական Գործին նկատմամբ իրենց եռամուլ անտարբերութիւնը ոսկեզոծելու առիթ չեն փախցնիր ու խանդավառօրէն կը կառչին է՛ն այսպանական ու խախուտ պատրուակներուն: Անոնք, կեղծ դառնութեան աշխատաւոր ծամաճուճով մը, կը յիշեն յաճախ Հայ Յեղափոխութեան առաջին շրջանը, ու կը հառաջեն.

— Է՛հ, ո՛ր են այն ատենները... ան ի՞նչ օրեր էին... մէյ մըն ալ ե՛րբ կը դառնան... կարելի՞ բան է ատիկա...

Աւ ջերմեռանդ մաղթանքներ կը հեւան ներսդի-

նուն, որպէս զի այդ անիծուած կարմիր օրերը յաւիտ չվերադառնան:

Միենոյն սխալ կարծիքը օակայն շատ մը բարձր միտներու և անկեղծներու մտքին մէջ ալ սպրդած, տեղաւորուած է զժբաղդաբար և իր փնտասկար, տարալուծիչ ազդեցութիւնը կ'ունենայ հոն, Ղլատելով ինքնազոտահաւանքը, քանզելով մանաւանդ հաւատքը, առանց որուն՝ ո՛չ մէկ մեծ ու դեղեցիկ բան կարելի է իրականացնել, առանց որուն՝ անկարողութեան կը մատնուին բոլոր ազնիւ ճիգերն ու զօհողութիւնները, առանց որուն՝ անձնութիւնները կը կասին, կը սպասին, խիզախութիւնները կը զազդին, կը կոտորին, կործանեն կ'ընդարմանան, կ'անգամալուծուին, հաւատքը, առանց որուն՝ յեղափոխական Գործը իրապէս մահուան կը դատապարտուի:

Այսպէս, գրեթէ միշտ, մեծ ձախորդութիւններու վազորդային՝ ողբալու, աւաղելու անառնական ու յանցապարտ հակում մը շուարած, ուղեկորոյց ամբօխները կը մղէ կոկիճազին վերյուշումներու, ներկան անցեալին հետ բաղդատելու, անցեալին առաւելութիւններն հաստատելու, թուելու, անցեալին ախը քաշելու:

Ուրիշ կերպ չէր կրնար ըլլալ մեզի համար ալ, Հայ Յեղափոխութեան առաջին շրջանը փակող զարհուրելի աղէտքներէն վերջը:

Յեղափոխական կոխին առաջին անյաջողութիւնը անդարմանելի, անվերականգնելի պարտութեան մը համեմատութիւններն առաւ երէկուան ստրուկին աչքին: Ազատութեան հազիւ գտնուած, սորվուած ճամբան կարմիր, ծածկուեր էր՝ ազգային նօր իտէալին համար զօհուողներուն արիւնովն ու զիսկներովը: Ամէն բան կորսուեր, ամէն յոյս խորտակուեր էր, ու մեր զժբաղդ Հայրենիքը ճգնաժամներուն է՛ն ահաւոր ու է՛ն մահացուն օգոսեր էր ապրել:

Անկից ի վեր, զնգաններու խորբէն ու կախաղաններու առջեւէն արձակուած սխրալի ազաղակներ ապացուցին քանի՛ անգամ, թէ տաճիկ բռնութեան դէմ Հայ ընդվզումը չէր սպառած, թէ յեղափոխական Գազափարին ախոյանները չէին հատած, թէ Հայը դատաւիճ չէր եղած, բայց զեռ չի կրցան փարատել ժողովուրդին հոգիէն խափանել կարօտը հին օրերուն, նախապաշարուած ու Ղլատիչ սուզը Հայ Յեղափոխութեան առաջին շրջանին:

Ու զեռ այս միջոցիս, լեզէն կը կազմեն անոնք, որ կը հաւատան տակաւին, թէ Հայ Յեղափոխութիւնը, ասկից տասը տարի առաջ, աւելի մեծ ուժ մը կը ներկայացնէր, քան ինչ որ չի կրնար խօստանալ իօկ այսօր:

Բայց ի՞նչ կ'արժէ այդ կարծիքը, ո՛ր ատիծան հիմնաւոր է ան: Քիչ մը մօտէն քննենք, նայինք:

* * *

Չպիտի յաւակնինք, թէ այսօր Հայ Յեզափոխու-
թիւնը իր տարր տարի առաջուան ունեցած ուժէն ա-
ւելին կը ներկայացնէ, Ախարապէս, Բայց պակաս...
Հո՛տ պէտք է ուշադրութիւն դարձնեն անոնք, որ ինք-
նախարկութեան անմեղ ու օրտաշարժ փորձութենէն չեն
բռնուած:

Այսօր, Հայ Յեզափոխութիւնը՝ նիւթապէս նուա-
զագոյն ուժ մը չենթադրելով հանդերձ՝ վտտահարար
կրնանք ըսել, թէ բարոյապէս դերազանց տոկոնութիւն
մը օտարացած է՝ իր շարունակելիք կոիւն համար անհա-
մեմատ աւելի ձեռնաու:

Ինչ օնէինք երէկ, աւելի քան այսօր, —բազմա-
քանակ ազմամթերք, ոարտափելի թնդանօթնե՛ր, կա-
նոնաւոր բանակնե՛ր, իտէալ կազմակերպութիւննե՛ր...:

Մենք մեզի խօսելով, կրնանք ըսել, թէ զէնքէ աւելի՛
արի բազուկներ, կազմակերպուած բանակէ աւելի՛ անձ-
նուրաց կամաւորներ, արթուն ու սուր գիտակցութենէ
աւելի՛ կոյր ու կատաղի հաւատք շինեցին Հայ Յեզա-
փոխութեան առաջին շրջանին ուժն ու զեղեցկութիւնը:
Ատոնց, այդ էական, թանկագին տարրերուն սակաւու-
թեան մէջն է որ պէտք էր փնտռել սկարացումը, թու-
լացումը յեզափոխական ճիգին:

Ու պէտք է խոստովանինք, որ այդ անհրաժեշտ
տարրերը նաւագումի վտանգաւոր վայրկեան մը անցուցին
մեր ցեղը զարնող ազէտքներէն վերջը: Անբարոյաց-
ման եւ ուրացումի տխուր օրեր՝ ուր յեզափոխական
կտրիճ, այլ անտաշնորդ բանակը խարխափեց, ան-
շարժացաւ: Գատապարտուած օրեր ոակայն՝ որոնք
երբէք չպիտի արատէին մեր յեզափոխական պատմու-
թիւնը, եթէ անոնց առաջն տանել զիտցուէր ժա-
մանակին: Մէկ կողմէն, անարժան ու անձեռնահաս
վարիչներու անբաւականութիւնն ու անհաւատարմու-
թիւնը, միւս կողմէն, իր դիրքին յոյսերուն ու ձրի
ակնկալութիւններուն մէջ պատրուած ժողովուրդին ըս-
տըրկամտութիւնն ու վատութիւնը պահ մը կրցան ընդ-
հատել յեզափոխական պայքարը, իր էն բունն ու յու-
սահատ խոյանքին մէջ իսկ: Այս դժնդակ ու մահա-
բեր կացութիւնը չէր կրնար տեւել: Յեզափոխական
Գաղափարին իսկ էր, որ վտանգը կը սպառնար: Պէտք
էր որ անոր ճշմարիտ ախոյեաններն ունենային վերջին
բաօր: Եւ անոնք շուշացան, առաջ նետուեցան, յա-
մառեցան ու յաղթեցին շարիքին:

Այսպէս է արդէն մեծ ու ազատագրող գաղափար-
ներուն յաղթական ճակատագիրը: կը պատահի որ ա-
նոնք երբեմն քօղարկուին, անոնց կենարար լոյսը ամ-
պօտի շուարած ու մատնուած ամբողջներու աչքին,
բայց անոնք՝ աւերուեմներու եւ նախճիրներու տակէն՝ կը
ժայթկին, կը բարձրանան վերստին, ու կ'արենն, կը
կենտաւէտեն դարձեալ տառապող մարդկութիւններու
մթաղնած հօգին: Երբ գաղափար մը հաւատք ու պաշ-

տամունք կը գառնայ՝ ուշ կամ կանուխ՝ ապահով է
անոր յաղթանակը: Երբ հերոսներ ու նահատակներ
գաղափարը կը նուիրագործեն իրենց արիւնովը, ա՛լ չի
կայ գօրութիւն, որ կարենայ դիմադրել այդ արիւնին
գօրութեանը: Եւ օ՛ր գաղափարը կրցաւ երբէք նուի-
րագործուիլ այնքան սխրալի զոհաբերութիւններով, այն-
քան արիւնով ու արցունքով, որքան հայ յեզափոխա-
կան Գաղափարը:

* * *

Իսկ այսօր:

Այսօր, Հայ Յեզափոխութեան առաջին շրջանը յատ-
կանող բոլոր կենսական ու արգաւանդ տարրերը՝ վա-
ղանցուկ լքուածն վերջ, գոր բացառեցինք, հրեւան
կուզան բազմապատկուած ու, յարածուն առատութեամբ
մը, իրենց հզօր օժանդակութիւնը կը բերեն նուիրա-
կան, անլքելի Գործին: Բազուկները նորէն կը բարձ-
րանան, կը նուիրուին, անձուէր արամադրութիւնները
կ'արթնան, կը հասնին անհամբեր ու սարսուղին:
Յեզափոխական վայրաժատին բանակը ահա՛ կը հա-
մախմբուի իր արիւններանգ դրօշին տակ ու կը օկօի
շարժիլ, պատրաստուիլ, ամբանալ, կրկին ահեղօրէն
զարնելու համար վաղը:

Բայց այդ անհրաժեշտ տարրերուն վերագումովն
ու վերակազմութեամբը չէ միայն, որ Հայ Յեզափո-
խութիւնը ինքզինքը կը հաստատէ այսօր ու՛ թէև
նիւթական աւելի աննպատ պայմաններու մէջ՝ կը
գերազանցէ իր նախորդ շրջանը:

Այս անտեսուած, այլ ակներբե գերազանցութիւնը
կը շեշտուի մասնաւորապէս օտ անվիճելի ու թելադրա-
կան իրողութեան մէջ՝ թէ յեզափոխական Գործին
գոյութիւնն ու կենսականութիւնը ապահովող տարրերը
աւելի գտուած, աւելի հարազատ, աւելի անկեղծ ու
մանաւանդ աւելի զիտակցական տարրեր են այսօր,
քան երբ և իցէ եղած ըլլան անցեալին մէջ:

Այսօր, հայ յեզափոխականին համար, անձնա-
զոհութիւնը՝ միօթիքական տենդոս յափշտակութեան
մը, տարափոխիկ խանդավառութեան մը, վայրկեանա-
կան գինովութեան մը կամ յանկարծական հիբնոսա-
ցումի մը արդիւնքը չէ՛, ինչպէս շատ հեղ կը պատահէր
երէկ, այլ պաղարիւն ու դաժանօրէն զիտակից որոշում
մը ազգային իտէալին համար զօհուելու, այլ ահաւոր
ու անգաճալի վճիռ մը՝ զէպի մահը տիրաբար քաշելու:

Անտարակոյտ, առջի պէս, ամէն տեղ, Յեզափոխու-
թեան անունով երդուընցողներ չեն վխտար այսօր,
բայց անոնք, որ յեզափոխական կարգերուն մէջ կը մնան՝
հաւատարիմ իրենց դրօշին՝ անսնք իրապէս ու զրա-
պէս յեզափոխականներ ըլլալու ապացոյցը կուտան
շարունակ:

Այո՛, առջի պէս, ամէն տեղ, խանդավառութիւն չի
կայ անշուշտ յեզափոխական Գործին շուրջը, բայց

հոն, ուր Յեղափոխութիւնը կ'ապրի ու կը տիրէ սըր-տերուն ու մաքերուն, հոն ա'լ չեն շարունակեր բաւա-կանանալ երգերով ու բացազանչութիւններով, այլ պարտականութիւններու հատարումին կը փութան, գե-րազանց ղոհաբերութեան չափով մը, որ քիչ տնգամ հաստատուած է առկից առաջ:

Քս այլևս ո'չ մօտայի համար և ո'չ ալ տիլէթան-թիզմով կարելի է յեղափոխական ըլլալ: Այսօր, ինք-զինքը յեղափոխական գաւանիլը կը նշանակէ սրօշ կարգապահութեան մը հպատակիլ՝ որօշ պարտականու-թիւններ և որօշ պատասխանատուութիւններ ստանձնել՝ որօնց թերանալը, որօնց գէմ մեղանչելը զիրին ու նե-նելի չի կրնար ըլլալ այլևս:



Շրջանը, որ բացուած է Հայ Յեղափոխութեան առջեւ, անոր է՛ն հզօր, է՛ն շքեղ ու է՛ն արգաւանդ շրջանը պիտի ըլլայ ապահովաբար:

Եւ արդէն ուրիշ կերպ չի կրնար ըլլալ: Յեղափո-խական Գործին շուրջը յառաջացած, զայն պայմա-նաւորող նոր հանգամանքներն իսկ կը հարկադրեն, կը բռնապատեն, կերպով մը, այդ բարեշրջումը:

Ա'լ անկարելի պիտի ըլլայ յեղափոխական մարմին-ներուն թոյլ, վարանոտ, կամ անբարեխիղճ գտնուիլ ի-րենց պարտաւորութեանց կատարումին մէջ: Ո'չ միայն պիտի զուշանան անոնց թուշնալէ, թերանալէ, ո'չ միայն տխուր ու բարերար փորձառութիւններ զիրենց վերջնապէս խելարած, պատրաստած պիտի ըլլան, այլ մանաւանդ ստիպոտած՝ իրենց գերազոյն ճիւղը թա-փել, ամէն վայրկեան, ու այդ պայմանաւ միայն պիտի կրնան գոյութեան իրաւունքնին պահել, տեսել, ար-դիւնաւորել: Ա'լ, յեղափոխական մարմիններուն համար, արժանիք մը չպիտի ըլլայ միայն անգուլ ու անգազրում գործունէութիւնը, այլ նաև, այլ մանաւանդ սնխուսափելի, անդիմադրելի հարկ մը: Որովհետեւ այն յեղափոխական մարմինը, որ չի շարժիր, չի կազմակերպւիր, չի կեն-սանօրոգոյի շարունակ ու չի գործիր՝ զստապարտուած է մեռնելու:

Ու գործելը, աղմուկ հանել չպիտի նշանակէ: Յեղա-փոխութեան մէջ, կուտակցական ուղիով համար կորովի ու կեանքի բռնի վատնութիւններ բացարձակ ոճրադործու-թիւններ են: Հայ Յեղափոխութեան առջեւ բացուած այս նոր շրջանը ատով իսկ գերազանց պիտի ըլլայ իր նախօր-դէն, քանի որ Գործը կազմակերպուած, նպատակայարմար ու վճռական պիտի ըլլայ հարկաւորաբար: Ատով է որ անց-եալը պիտի օրհնենք, անցեալին մէջ մեր ըրած ան-օտեման զոհողութիւնները տրդիւնաւոր ընծայած՝ ու անոնց՝ մեր ներքիզին բանտուած օուզէն վերջապէս միթ-

թարուած պիտի ըլլանք:

Քննարկ ու վատ գործ մը տեսան անոնք, որ աճա-պարհցին անցեալը դատապարտել: Անցեալը անցեալի էր, ու չէր կրնար ուրիշ կերպ ըլլալ: Տրուած չէ՛ մարդ-կային որեէ կամքերու պայթող փոթորիկը շղթայել: Եւ յետոյ, սխուած գործը, ապրուած պայքարն է որ կուտայ գերազանց փորձառութիւնը: Ո՞ր ազգի յեղա-փոխութեան մէջ կարելի եղած է խուսափիլ այդ կեանքի ու արինի ճակատագրական վատնութիւնէն, եւ ո՞վ ըտաւ որ անօգուտ կամ փաստակար են անոնք: Վնասակար եղան մեզի համար:—Յեղափոխական ներկայ շրջանն է որ պիտի լուծէ՝ ու պէտք է որ լուծէ՝ այդ հարցը:



Յեղափոխական ներկայ շրջանը անհունօրէն կը գե-րազանցէ իր նախորդը ժողովուրդային գիտակցութեան տարապայման աճումով մը: Յեղափոխական ժողովուրդը ա'լ չի հրապուրուիր, չի նախապաշարուիր հեռաւոր ու խորհրդանշանացած անհատականութիւններու արուես-տական ու խարուսիկ հմայքով: Կորսօրէն չի հեռակեր-ան, տլլ անպայման կը վտահի: Այնքան աւելի պա-հանջկոտ է իր պէտքերն, որքան անձնութեան թիւով պատրաստ՝ նետուելու անոնց ետևէն: Այս ամբօրը դիտէ, թէ ի՞նչ կ'ուզէ, ո՞ր կ'երթայ, բայց զիտէ մա-նաւանդ, թէ ի՞նչ կուտան իրեն, ո՞ր կը տանին զինքը: Կորսօրի, խղճամիտ, ինքնախտահ ու յանձնուած վարիչ-ներ միայն պիտի կրնան զայն տառնորդել այսօրհետեւ: Անկարողները, մակաբոյժներն ու վախճանները գատա-պարտուած են ճամբուն վրայ իյնալու, անոր օտքերուն տակ կոխկոտուելու, առանց վայրկեան մը արգիլել կա-րենալու անոր տիրական ընթացքը:

Յեղափոխական ներկայ շրջանը գերազանց է իր նախորդէն, որովհետեւ մեր քաղաքական-ընկերային փորձառական գառախարակութիւնը զարգացումի բարձ-րագոյն փուլի մը հասած է այսօր:

Երկէ հօկայ պատրանքներէ կը տարուէինք ու վարդազոյն հորիզոններ կը զաւնային մեր յափշտակուած օւղեղին մէջ: Մեր հիասթափ աշուշները հեռուն նայիլ ու աւելի՛ անդին տեսնել սորվեցան: Ա'լ չեն կրնար մօտենալ, փորձել մեզի անկարելի ու դաւաճան յոյսեր: Հիմա գիտենք հաշուի առնել շնակտն կեղծիքը ու վայրագ ետականութիւնը աշխարհի զօրաւորներուն: Եւ բոպայի բողբոջած հոգիին մինչև յատակը սեռեցինք մեր անձկագին նայուածքները ու կարդացինք անդիր ու պիղծ մատանը մարդկային վիթխարի վատութեան: Հաւկցանք, թէ միտ միտակ էինք մեր Գահիճին դէմ, լու մեր ումին միայն կոթնելու, ապաւինելու առնական օւխտը կնքեցինք:

Ճակատնիս իրականութեան անողորմ կռանդին զարկած՝ լուսաւոր բժրոնունն ունեցանք մեր դատին, տեսանք թէ ամէն զեղեցիկ բան զործնական ալ չէր անպատճառ, թէ՛ յայրելու իրաւունքէն զրկուած՝ չէինք կրնար լըջօրէն անմահութիւն պահանջել: Ու հրաժարեցանք կարգ մը աղւոր, այլ անժամանակ ու խափանիչ իւթօրինիքէ: Իտէպը չէր որ զոհեցինք, այլ անոր հասնելու կտրուկ ու կարելի ճամբան փնտոցելնք ու գծեցինք: Ու ասիկա մեր հաւատքը կրկնապատկեց վերջնական յաղթանակին վրայ:

Յեղափոխական ներկայ շրջանը անշո՛ւշա գերազանց է իր նախորդէն: Ինքնապաշտպանութեան բնազդը անհաւնօրէն աւելի զօրացած է այսօր հայ ժողովուրդին մէջ: Ա՛յլ ոչխարի պէս չպիտի մօրթօսի ան, որովհետեւ փորձով գիտե՛ք, թէ Դահիճին գու՛թը չի կրնար շարժել, անոր ոտքերուն պլլուելով, անոր զուսի ծակով, աղաչելով, պաղատելով: Առաջ կը յուսար տակաւին զայն օղորել, վերջին պահուն, անոր առջեւ օտկորէն տափակնալով: Հայ ժողովուրդը շունի այլեւ այդ անարդ յոյժը: Հիմա համոզուած է ան, որ Դահիճը չպիտի խնայէ ու հասկցած՝ վերջապէս, որ վառութիւնը չի փրկեր, այլ անվրէժ ու ամօթալի ժահը կ'ապահովէ: Ու այս անգամ զարնելով պիտի զարնուի ան, անասուններէն վար ծնացած չըլլալու համար:

Երեկ սկսնականներ էինք յեղափոխական կռիւն մէջ, այսօր վարժ ենք ու փորձառու: Մեր աշուրները Արիւնք տեսան ու մեր օրտերը խօտացան, նարձրացան Բանութեան կրակներուն ու զանաւանդուն առջեւ: Ա՛յլ Հայը չի գողար, չայլայլեր թրջական զնդաններուն ու կախաղաններուն յաճախանքէն: Մահուան քովէն անցանք ու մենիլ սորվեցանք քիչ մը ամենքս ալ:



Յաժանելի բառատօքս մը պաշտպանած շնք ըլլար ուրի՛շ, հաստատելով, փաստելով ու բացառելով, թէ Հայ Յեղափոխութիւնը, իր ներկայ շրջանին մէջ, աւելի հիմնապէս հաստատ ու զօրաւոր կողանի մը վրայ կանգնած՝ աւելի գիտակից ու կենդանակ ուժերով գօտեպնդուած՝ զէպի իտէպը՝ իր բուն ճամբան ձեռք առած է տիրաբար:



ԱՍՊՍՏԱԿՆԵՐԸ

— 0 —

Մ Ի Ն Ա Յ Օ Ղ Լ Ո Ւ

ԺԲ.

ԹՈՒՄԻԿ ԱՐԹԻՆ



Այդ օրը, Արթին սաստիկ մտատանջութեան մէջ էր Առտուն կանուխ, օօփորականին համեմատ, Տալլան Տաղիի ոտորտը աւրածուող զաշտին վրայ իր կովերն արածելու գացեր էր:

Աշնան պողոտէ հօվը՝ տերեւթափի տրտում մերկացումին պատրաստուող ծառերուն մէջ կը ոռլէր: Քաղաքին այս ու այն փողոցներէն հետզհետէ դուրս կուգային փոքրիկ կարաւաններ: Այգեկու՛թը սկսած էր: Երկար կոնաձեւ զամբիւղներ էշերու համետին երկու կողմերէն կը կախուէին ու Մարգուանցիներ անոնց մէջ տեղը կ'ծկտած՝ խաղողի այգիները կը փութային: Ու մանք մանի ու շարքի կը կանչէին, ոմանք նոր ելած ազգային երգեր, իոկ ուրիշներ՝ զեռ քնաթաթախ՝ իրենց զրատոնները կը քշէին հայհօյելէն:

- Մօ հէյ շօ...
- Քանի տարի է հայրենիք սիրում...
- Տե՛ս, տե՛ս, տե՛ս...
- Հայը բանտէն չվախնար...
- Մե՛ս, ծե՛ս, ծե՛ս...
- Թող կօրնչին տաճիկները Հայաստանի սուրբ հողից...

Այսպէս ամէն կողմէ տեսակ մը ձայն կ'ըլլէր: Ու հեռուէն՝ այգիներու շարքէն՝ նոր դուրս եկող հովիւր իր հոյհօյներով զաշտը կ'աղմկէր:

Անգին, արևելեան հորիզոնին վրայ, վիթխարի սեպի մը պէս ցցուած Ադ Տաղը՝ կարծես քունէն հազիւ արթնցած՝ վար կը նայէր, իր ստորտը տարածուող Սոլու Օվայի դաշտին, որուն յուստեանական պահապանը կը թուէր կարգուած ըլլալ: Վարը, լեռան ոտքին տակէն, Թերօ Ախանը կը սողար, իր վնիտ շուրճը ապառաժներու վրայէն զահավիժելով:

Պահ մը վերջը բարձրավանդակի սնարէն հրեղէն բաշեր կը ցցուէին ու ծիրանեզոյն անձայրածիր շղարը մը անոր զլսուն կը վէավէտէր: Արևը, անոր լանջքէն մազլցելով, վեր կ'ըլլեր հիմա, ու յաղթական ժպիտով մը բնութիւնը կ'ողջունէր: Տալլան Տաղին, արևմուտս,

քէն, զլսու հակուածով մը, կ'ընդունէր անոր բարնը, ու երկու տիտան լեռներուն միջեւ փոռուղ զաշտը կը ցնծար:

Ընկուզենիի մը բազմոստեայ արմատին վրայ ընկողմանած՝ Արթին համոտ կենսագրութիւնը կը կարգար՝ պուզար յեղափոխական գէտքերէն, Սարկաւազ Լեւկիի: Այդ անզուգական հերոսին կեանքովը յափշտակուած՝ իր չորոզին նայելու ժամանակ շունէր: Հազիւ երբեմն, գրէին երեսները դարձուցած տտեն, աչքերը վեր կ'առնէր ան, հսկելու համար որ կովերը այգիներուն չձտենան, ու նորէն կը խորասուզուէր ապրտամբ Պուզարին կենսագրութեանը մէջ: Արթին, իր ամբողջ էութեամբ այդ ըմբոստ կեանքին արկածներուն կպած՝ զանոնք անմահացնող փոքրիկ գիրքը կը լափէր ու շատ մը էջերու վրայ կրկին եւ կրկին կ'անդրադանար: Մօտիկ համեմատութեամբ մը, այդ սարուկ ժողովուրդին ճակատագիրը շղթայուած կը գտնէր հայ ժողովուրդի ճակատագրին հետ: Ընդվզուած ոգին աստիճանաբար ծագում կ'առնէր անոնց մէջ, ու ահա հանրային կեանքի այլազան երևոյթները, անվերջ հանգոյցով մը իրարու զուգորդուած, կուզային ու կը տղանցնէին Արթինի աչքին առջեւ:

Նախ, ըմբոստներու յառաջապահ գունդն էր, որ պուզար ժողովուրդի՞մ երկունքներէն ծնած՝ երեսն կուզար: Այդ ուխտուած կամաւորներուն թիւը շատ քիչ էր, բայց անոնց՝ թաքուն ու անընկճելի ուժերով գօտեպընդուած՝ գերմարդկային հրաշքներու կարող կ'ըլլային: Իրենց մեծ կոչումին գիտակցութեամբ գինուան՝ թըշուտութեան ու տանջանքներու անողոք խածատումէն չէին կանգ առներ, վհատեր անոնք: Յեղափոխական սուրբ կրակը անոնց հոգիները բռնկեր էր ու վտանգէ վտանգ կը մղէր, կը նետէր զանոնք: Իրենց կեանքը մոռցած՝ Հայրենիքին համար կ'ապրէին, իրենց տարաբաղ եղբայրներուն ազատագրութեան ու երջանկութեանը համար կը շնչէին անոնք: Թիւրք անարգ լուծին իրպատ խորտակումը այդ հերոսներուն միակ ու անլքելի նպատակն էր:

Այդ արի ու անձնուրաց յառաջապահներուն ետեւէն կը վազէր պուզար հասարակութեան գիտակից ու պարտաճանաչ մասը, տանջուողներու, կեղծեցուցողներու ստուար ու ցաւագին գտնուածը: Այդ օթափոջ սարուկները, ապրելու իրաւունքէն զրկուած, մերկ ու թափառական, իրենց նսեմ ճակատներուն վրայ կը պարտացնէին թիւրք բարբարոսութեան զարկած զարաւոր խարանները: Ազատութեան նորածին իտէալը զերենց կը քաշէր, թունգ կը հանէր ու երանութեան վարդազոյն հորիզոններ կը բանար իրենց մթազնած հոգիին առջեւ, բայց ազատութեան տիրացումին հարկադրած անհրաժեշտ բազմութիւններուն ու վտանգներուն գիմազրաւելու համար գնա կը պակսէր իրենց յեղափոխական

կարող: Կոտելով է որ ստրուկները յանդուգն ըլլալ կը սորվին:

Վատեր ալ կային, որոնք ազատութեան ուսկիրաններուն ճամբան խափանել կը նկրտէին: Ժողովուրդներու շահագործութիւն ըլլալով իրենց անարգ կոչումը, ամէն դաւաճան միջոցներու կը դիմէին անվարան, յաւերժացնելու համար ստրկութիւնը, այնքան ձեռնառն իրենց անխոտոտվանելի հաշիւներուն:

Պաղատարին ախոյեանները սփայուած էին արիւններու մէջէն անցնել՝ իրենց ետեւէն քաշկոտելով վտանստ ու զողահար ամբոխ մը, որ կարմիր ճամբուն երկայնքէն զահանգած կը մոռնար երբեմն իր ընդվզումները, իր սխտերն ու երգութիւնները:

— Արդեօք, կը մտածէր Արթին, միևնոյն շրջաններէն պիտի շանցնէր հայ ժողովուրդը, որ աւելի երկար տտեն տարած էր ստրկութեան դաժան լուծը:

Ու ապագայի վարագործին ետեւէն իր բորբոքած երեւակայութիւնը կը յամենար ոգել հայ անդրանիկ հերոսները խեղդող կաղաղաններ, խողնոզուած հայերու գիակներ, սոնացող ու անթժոզ հայ խուժաններ եւ յեղափոխական Պաղատարին գէմ հայոյող վոհմակներ: Իսկ աւելի անդին, հեռուն, շա՛տ հեռուն, կը հոգետեսէր վրիժառու և յաղթական խուժեր, որոնք Սզաա Հայաստանի փառքը կ'երգէին:

Հեռուէն «հօյ, հօյ»ներու ձայն մը փրթաւ: Արթին օթափեցաւ: Այգիներու պահապանն էր՝ որ կովերը դուրս կը քշէր: Լեւկիի կեանքովը մտազբաղ՝ Արթին ուշագրութիւն չէր դարձուցած իր կովերուն, որոնք այգիները մտած էին մաաղաչ ծառերը ուտելու անգիմազրելի փորձութեամբ: Պահապանին աղմկայի պոսչուցներուն վրայ, Արթին օրտնեղած, տեղէն վեր թաւ և առանց սպասելու որ կովերը կշտանան, ամենքը մէկ տուն քշեց շտապով:

Արթինին սովորականէն կանուխ վերադարձը իր կնոջ զարմանք պատճառեց:

— Տարօրինակ բան մը պատահած ըլլալու է նորէն, ըսաւ Մարինոս ինքն իրեն, եւ ուզեց հարցաւորածել իր էրիկը, որուն գէմքին արտայայտութեան կռահեր էր արդէն աներ ներքին խոովքը:

Երկու տարիէն աւելի էր որ Արթին, ինքզինքն ու իր ընտանիքը մոռցած, յեղափոխական կազմակերպութեան նուիրուեր էր հոգով մարտնոզ: Խորհրդաւոր անձնաւորութիւն մը զարձեր էր ան կարճ ժամանակի մէջ, ու Մարինոսէն գատ, շատ քիչերը կարող եղեր էին անոր գաղտնիքներուն խօրը թափանցել, անոր խօսքերուն նշանակութիւնն հասկնալ:

Հին Խորայլի մարդարէներուն նման, հրապարակներուն վրայ կեցած, «Աստուծոյ թաղաւորութիւն»ը կը քարոզէր ան: Աւետարանը մէկ ձեռքէն միւսը կ'երթար

Քրիստոսի, ու իր խոսքս ձայնով հոգեւոր երգեր եղա-
նակել կը ճարտարութեամբ Մինչեւ կրօնիկը երկարող
վերաբերուին տակ սահայն եւթադան մը ու վեցհարուած.
եան մը կը կրէր ան: Երբ իր շուրջը խոնուած բազմու-
թեան մէջ խոստմանալից գէմբերու հանդիպէր, բարեպաշտ
ձեւակերպութիւններով, անոնց կը մօտենար, անոնց
ականջն ի վար բաներ մը կը փոփոսար, ու մասնաւոր
ժամադրութիւններ կը նշանակէր անոնց: Եւ երբ նրկորդ
անգամ անոնց հետ գտնուէր, իր եւթադանն ու վեց-
հարուածեանը կը շողացներ անոնց աչքին, հայ ժո-
ղովուրդի տառապանքը կը պարզէր, գալիք արին.
հեղութիւններուն վրայ ոպտանական գուշակութիւններ
կ'ընէր, ու զենքին պաշտամունքը կը քարոզէր անոնց:

Այդ օրը, Մինասի կոխին լուրը Մարգուան հա-
սած էր, բայց այնքան անորոշ ու տարտամ, որ հլթին
վրայ վերջնական բան մը հասկնալ կարելի չէր: Յա-
րութիւն որանեղութենէն ինքզինքը կ'ուտէր: Գիտէր,
թէ ատանկ ծանր պարագաներու մէջ, անպատճառ
լրաբեր մը կը հասնէր իրեն: Քանի մը անգամ շուկան
վազեց, նեղ ու աղտոտ փողոցներու մէջ միկ քանի
ըրջաններ ըրաւ, անծանօթ ու օտար դէմքեր խուզար-
կեց շորո գին, բայց ոչ ոք հանդիպեցաւ իրեն ու չի
կրցաւ իր անկուութիւնը անգործել: Իրմէ զատ ամենքն
ալ իրենց առօրեայ գործերով զբաղած էին, ու իրենցմէ
և իրենց շահերէն դուրս ուրիշ բան տեսնելու ո'չ հե-
տաքրքիր էին եւ ոչ ալ ընդունակ:

Արթին, յուսահար, տուն վերադարձաւ, հարցուց
Մարինոսին, թէ ժարդ եկած էր գինքը փնտռելու: Ոչ
ոք եկած էր: Սենեակին մէկ անկիւնը քաշուեցաւ, եւ
ինք իր մէջ ամփոփուած՝ աչքերը գոցեց մրափ մը քա-
շելու համար: Անկարելի եղաւ: Իր վրդովմունքը դեռ
չէր հանդարտած:

—Վահան, ի՞նչու տունը մնացեր ես, դպրոց չեր-
թա՞ս, գոչեց ան յանկարծ, առանց ինչ ըսելու գիտ-
նալու:

—Հայրի՛կ, կէս օր է, հաց ուտել եկեր եմ, պա-
տասխանեց Վահանը, հօրը տարօրինակ հարցումէն
զարմացած:

—Արմենա՛կ, հանդարտ կեցիր, ի՞նչու դասերդ չես
սերտեր:

Արմենակ կերակուր կ'ուտէր, հօրը խօսքին վրայ՝
չկրցաւ ինքզինքը զեպել և ըսաւ՝

—Հայրի՛կ, աչքդ բաց, սեղանին շուրջն ենք...

Արթին շլտեց, մեքենաբար ոտքի ելաւ և ինքն ալ
սեղան նստաւ: Բայց կերակուրն ալ հանգիստ չկրցաւ
ուտել, կիսկատար թողլով դուրս ելաւ, ախոս գնաց,
կովերը առջեւ ձգեց ու նորէն դաշտ գնաց:

Արթին, թրքական կոռնիւնցէն անցնելով Խարլըխի
ճամբան ձեռք առաւ, եւ հագիւ բաց դաշտը ելլելու
վրայ էր, երբ հեռուն, ընկուածնիներու տակ, մարդ

մը նշմարեց: Կովերը գէպի անոր կողմը քնեց ու
քաշուած արտերու խոզանին մէջ թող աալով՝ սկսաւ
օտարականը դիտել որ իրեն կը մօտենար:

—Չէրէ՛զ, բացապանչեց յանկարծ Արթին:

—Կարեւոր լուրով եկած եմ, ըսաւ Չէրէզը, իր
փափաղը ձակտէն վեր քշելով, իմ մեկնած պահուս
կոխի բանուած էին և...

—Յաղթեցին, Չէրէզին խօսքը կարեց Արթինը:
Իրեն համար պարտութեան մտածումն իսկ անտանելի,
անկարելի բան մըն էր:

—Յաղթեցին, կրկնեց Չէրէզը, որ տեղեակ էր
արդէն կոխին ելքին: Մասուն հասնելուն ամէն բան
իմացեր էր: Մինասի յաղթութեան աւետիսը իրմէ առաջ
հոն հասեր էր: Հայ, թիւրք եւ յոյն, ամենքն ալ այդ
լեռնցի դիցազնին վրայ կը խօսէին և հրաշալի բաներ
կը վերագրէին անոր:

Չէրէզ իր լուսմները մանրամասնօրէն պատմեց
Արթինին, որուն դէմքը ա՛լ պայծառացա՞, երանութենէն
կը ճառագայթէր:

Չինքը ամենէն աւելի ուրախացնողը Լօղմանի եւ
Կիւչիւկ Հասանի գնդակահար օստկիւն էր: Արթին
կը ճանչնար երկու աւազակները: Իր ճանիկի հայ
գիւղերուն մէջ՝ քարոզչութեան միջոցին շատ անգամ-
ներ հանդիպեր էր անոնց: Երկու կարիճ լազեր, որոնք
ըմբոստ կերպով կը շրջէին լեռնէ լեռ, կառավարութեան
օտրօսափը զարձած: Անոնց վայրի ու յանդուգն կեան-
քին նկատմամբ տեսակ մը յարգանք ու հիացում ունէր
ինքը: Եւ երբ տեսաւ որ Մինաս—այդ ատեն իր սօ-
տիկան զինուոր—Լօղմանիու իր խումբին կը հետապնդէր,
համոզեց գախ որ հրաժարի իր այդ հալածանքէն եւ
նոյնիսկ յաջողեցաւ զայն օտարական զինուորութենէ հանել:

—Պէտք է որ ես մեկնիմ, ըսաւ Չէրէզը, այս ի-
րկուն հոս կ'ըլլան, Չէրէզը ժամագրութիւն տուած եմ,
մինչեւ մեր Խըաըրլըխ գալը պատրաստութիւնները կը
տեսնէք:

—Որքան պիտի ուրախանան տղաքը, իրենց եր-
կարատեւ երազը իրականացած տեսնելով:

—Երբ գիշերուան նշանը ինչ պիտի ըլլայ, երբ
Խըաըրլըխ գանք, հարցուց Չէրէզը:

—Այո, բեն, գիմ, ըսաւ Արթինը, երեք անգամ կրկ-
նելու պայմանով:

Չէրէզը գէպի Տէյիբմէն Տէրէսին ճամբայ ելաւ, իսկ
Արթինը արտօնօք քաղաք վազեց, տղոցը լուր տալու:

(Շարունակելի)

ՄԻՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ

ԴՐՕՇԱԿԵԱՆ ԹԱՔԹԻՔԸ

1901, օգոստոս 1, թիւ 15 Նոր կեանքի մեր ծա-
նօթ խմբագրականը, Միութեան Խնդրոյն վրայ մեր
ամբողջ մտածմամբ պարզելով, ի միջի այլոց, յօտակօ-
րէն կը շեշտէր «միջնորդ», մանաւանդ «չէզոք միջ-
նորդ», ի մեր կայութեան անհարկի, փաստակար հանգա-
մանը՝ յեղափոխական կուսակցութիւններու միութեան
բանակցութիւնները վարելու համար:

«Միտքեան իրագործումիւ համար Հնչակեան կու-
սակցութիւնը կը նկատուի թէ ո՛չ միջնորդի և ո՛չ ալ պայ-
մանի պետք ունենալու եւ յեղափոխական մարմինները:
Իտեպի մը ներքին եղբայրակցելու համար միջնորդի
մը, մեծաւանդ չէզոք միջնորդներու պետքը նախատիւնը
մը և համոզուած ու գիտակից յեղափոխականներու
ու յեղափոխական կուսակցութիւններու:»

Այս կէտը ճշգրտ էրնք յօդուածի մը մէջ, որ կոչ
մըն էր միանգամայն հայ յեղափոխական մարմիննե-
րուն՝ Միութեան Խնդրին նկատմամբ իրենց կարծիք-
ներն ու տրամադրութիւնները անկեղծօրէն, համար-
ձակօրէն, անշահախնդրօրէն պարզելու, եւ որով կ'ըն-
դունէինք ու մէջտեղ կը զնէինք փոխադարձ անստեղծան
զօհօդութեան օկոգումները:

Ամենուն յայտնի իրողութիւն մըն է, որ մեր այս
կոչը, ազգային խորունկ ու կօկիծատ բաղձանքի մը վրձ-
ռական արտայայտութիւնն ըլլալով, ժողովրդային մեծ
օգնութիւն մը յառաջ բերու, ու մեզի հետ ինկապէտ՝
կրնանք ըսել՝ թէ ամբողջ հայ ժողովուրդն էր, որ
օպասեց մասնաւորապէս Դրօշակեաններու պատաս-
խանին:

Երկար լռութենէ վերջ, որ օկոած էր այլ եւս ան-
բնական թուիլ, Դրօշակ, իր 1901 սեպտեմբերի հա-
մարտով, հրատարակեց երկտող յայտարարութիւն մը,
որ՝ թէ մեր կոչէն հարկադրուած՝ անոր սեղակի եւ
օպասուած պատասխանը չէր օակայն:

Ահաւասիկ այդ յայտարարութիւնը,
«Միտքեան բանակցութիւններու առթիւ մեզ դիմող
ընկերներուն կը յայտնենք որ այդ բանակցութիւնները
ատենէ մը ի վեր վարող չէզոք անձնաշարժներէն ստաց-
ուած գրութեան մը համաձայն՝ շուտով անոր վերջնական
խօսքիւ կը սպասուի: Ամբողջ արտով կը փափաքէինք,
որ այդ խօսքը նպատակաւոր ըլլար յեղափոխական բոլոր

անկեղծ տարրերու միտքեան»:
Այս յայտարարութեամբ, Արեւմտեան Բիւրօն կը
ներկայացնէր հասարակութեան «չէզոք», անձնաւորութիւն
մը, որ իբր թէ «ատենէ մը ի վեր Միութեան բա-
նակցութիւններ կը վարէ», եղեր: Բայց ո՞ր մարմիննե-
րու միջեւ տեղի կունենայ այդ բանակցութիւնը,
— Հնչակեաններուն եւ Դրօշակեաններուն: «Չէզոք»,
ըսուած այդ անհատը սակայն երբէ՞ք, որ և է ատեն,
որ եւ է պաշտօն կամ պաշտօնական մեծութեամբ չէ
ունեցած Հնչակեան կուսակցութեան անունով խօսելու
և անոր կողմէն «բանակցութիւն վարելու», Արեւմտեան
Բիւրօնը գիտէր առ, ու մանաւանդ պէտք էր որ հարցուցած,
դիտեցած ըլլար:

Արեւմտեան Բիւրօն յայտարարութիւնը ներկայացած է
1901 սեպտեմբերի Դրօշակին մէջ: Եւ Հնչակեան կու-
սակցութեան կեդրոնական վարչութիւնը անկէ ամիս
մը առաջ, 1901 օգոստոս 1ին իր պաշտօնական
օտկանին մէջ բացէ ի բաց յայտարարեց թէ չէզոքի հետ,
միջնորդի հետ գործ չունի ինքը և թէ նոյնիսկ նա-
խատինք մը կը օպակ այդպիսի մէկու մը միջոցաւ Միու-
թեան իրականացումին հետապնդիլ:

Մեր այս յայտարարութիւնը անգամ մըն ալ եւ
հաջի կարգալ—դրել դիտեցող մարդոց իսկ կրնայ բա-
ցարձակապէս հասկցուցած ըլլալ, թէ Հնչակեան
կուսակցութիւնը իր կողմէն որ եւ է մէկու մը պաշտօն
կամ իրաւասութիւն տուած չէ՝ բանակցելու:

Արդ, Արեւմտեան Բիւրօն ի՞նչպէս կրնայ, ամիս մը
վերջ, Միութեան բանակցութեան խօսքը ընել: Ի՞նչ
բանակցութիւն է ատիկա քանի որ բանակցութիւն չիկայ,
ի՞նչպէս զայն «վարող», կը կենայ: Ու քանի որ «բա-
նակցութիւն վարող», չի կայ, ի՞նչպէս Արեւմտեան Բիւրօն
կը յանդգնի «բանակցութիւն վարող չէզոք անձնաւորու-
թեան մը», առասպելը պատմել ժողովուրդին:

Բայց շարունակենք:
Արեւմտեան Բիւրօն իր միևնոյն յայտարարութեան
մէջ, փափաք կը յայտնէր, որ յեղափոխական «անկեղծ
տարրերու միութեան նպատակաւոր (.) ըլլալ «չէզոք», ին
«վերջին խօսքը»:

Ի՞նչ բանի կը փափաքէր Բիւրօն, իր «ամբողջ
արտով»:— Միութիւնը դիւրացնելու:

Եթէ միութիւնը դիւրացնել, միանալ էր իր նպա-
տակը, պէտք էր, բնական էր, որ մօտենար, ձեռք
պարզէր անոնց, և միայն անոնց, որոնց հետ պիտի
միանար և որոնք արդէն եղբայրաբար ձայն կուտային,
հրաւեր կը կարգային իրեն:

Իսկ եթէ Բիւրօն նպատակը միանալ չէր, այն
ատեն, բնականաբար, Միութեան համար միջնորդ
փնտրելու, չէզոք միջնորդի մը կատարելու պէտք չունէր:
Եւ եթէ՝ միանալ չուզելով հանդերձ՝ յամառեցաւ «միջ-
նորդ»ին փարել ու «չէզոք անձնաւորութեան վերջին

խօսքին» սպասել, պարզ է, անվիճելի է ուրեմն, թէ Միութեան իրագործումին մտահոգութենէն առաջնորդուած չէր, այլ իր նպատակն էր պարզապէս «միջնորդ»ին միջոցաւ ստեղծել այնպիսի քաջընդունոր, որոնք Միութիւնը վիժեցնելու միայն պիտի կրնային ծառայել և որոնք միևնոյն առին պիտի կրնային— իր խելքով— փրկել զինքը՝ Միութիւնը վիժեցուցած ըլլալու վտանգաւոր ամբաստանութենէն:

Արևմտեան Բիւրօին այս վրան բաց վարպետութիւնը ամէն հանգամանք ունէր մեզի կառկած ներշնչելու: Բայց մենք զեռ կը յուսայինք, որ հանրային կենսական գործի մը զերպազանց նկատումին առջեւ, Արևմտեան Բիւրօն և իր կուսակիցները հետզհետէ պիտի մոռնան ամէն երկրորդական մտահոգութիւն, անցեալէն ժառանգուած ամէն սիթիլմաթիք հակառակութիւն եւ, վերջապէս, պիտի գան աջակցիլ մեզի հայ յեղափոխական եղբայրութիւնը իրականացնելու մեր անուրանալի ճիգին մէջ:

Այս մտածումով, զգուշացանք ո՛ր եւ է յախճան եզրակացութիւններէ և Արևմտեան Բիւրօին անկեղծութիւնը հրապարակաւ կասկածի տակ դնելէ:

Իրօշակի վերոյիշեալ երկտող յայտարարութիւնը բուն հիօթափում մը պատճառած էր, ու շատերը՝ վրդովուած՝ մեզ կը դիմէին հարցնելով, թէ ինչպէս կարելի էր մեկնել Արևմտեան Բիւրօին այդ վերջին արարքը:

Մենք չուզեցինք յուսահարութիւնը գրգռել եւ չփութացինք պոռալ, թէ «Իրօշակեանները Միութիւն չեն ուզեր», Ընդհակառակը, ջանացինք վառ պահել շատուող յոյսերը ու մենք ալ, մեր կարգին, սպասողական պաղարին դիրք մը բռնեցինք 1901, հոկտեմբեր 15, թիւ 20 Նոր Կեանքի մէջ, հետեւեալ օրացաւ տողերով.

«Հնչակեան կոստակցութեան ու հայ ժողովուարի զգացումները քարգմեհեղ մեր ծանօթ յայտարարութեանները սրպէս զի վնասակալ ու գործնական հողի մը վրայ առաջնորդիլ, հաստատուիլ Միութեան խնդիրը՝ կը սպասեմք որ Իրօշակ ալ համաձայն տրամադրութեաններով պատասխանէր մեր կոչին: Չենք ուզեր ըսել որ յոյրորովիլ յուսախաբ մնացիք մեր ակնկալութեաններուն մէջ, բայց պիտք է նաև խեստովակել, որ Իրօշակի հակիրճ յայտարարութեան ոգին ու պարտեակորտիւնը չի կրնար գոհացուցիլ համարտելի Միութեան չերմեանող կոստակցութեան համար:»

Մեր այդ միևնոյն յայտարարութեան մէջ ոսկայն Չէզոք ըսուած անհատին հանդէպ Արևմտեան Բիւրօին բռնած դիրքին նկատմամբ մեր զարմանքն յայտնեցինք, եւ որպէս զի ա՛լ բացարձակապէս անկարելի ըլլալ իրեն չէզոք բանակցողի առասպելին կաթնած՝ իր կամութիւնը քողարկել, անգամ մըն ալ, աւելի երկա-

րօրէն շեշտեցինք, «Չէզոք միջնորդի, անպատեհութեան մասին մեր արդէն յայտնած համոզումները: Ու աւելցուցինք.

«Ամէն քանի առաջ, յստակ ու աներկդիմի ըլլալ որոշած ըլլալով՝ կը յայտարարեմք, որ մեկը չենք գիտեր չէզոք մը, որոնք բանակցութեան պաշտօն մը յանձնած ըլլանք: Նոյնպէս մեզի ինչաց տրուած չէ, քի Արեւմտեան Բիւրօն չէզոքի մը պաշտօն յանձնած ըլլալ՝ մեզ հետ բանակցելու համար:

«Ղեկնորդ չենք սեպեր սակայն նկատել, քի Արևմտեան Բիւրօն յառ կ'ընէ Միութեան մասին ո՛ր և է բանակցութեան սկսել հիմնուելով միայն Հնչակեան կոստակցութեան կեդրոնական վարչութեան պաշտօնապէս և հրապարակաւ դրած յայտարարութեաններուն վրայ, քան քի որոշումներուն սպասելով Չէզոքի մը, որ Միութեան խնդրոյն վրայ բանակցելու ո՛ր և է յատկորտեան չունի եւ ոչ ալ յանուն Հնչակեան կոստակցութեան խօսելու իրաւունք:»

Եւ որպէս զի նորանոր ձգձգումներու, նորանոր եւ նպատակաւոր թիրիմացութիւններու սեզի չի տրուի, կեդրոնական վարչութիւնը, բացի այս հրապարակային շատ յոտակ ու վճռական յայտարարութիւններէն, մասնաւոր նամակ մըն ալ ուղղեց Արևմտեան Բիւրօին, Միութեան իրագործումին քանի մը հիմնական կէտերը առաջարկելու համար, որոնք ընդունուելուն պէս՝ երկու կուսակցութիւններու լիազօրները դէմ առ դէմ պէտք է գային, վերջնական լուծում մը տալու համար Միութեան խնդրին:

Այոքան որոշ, կտրուկ ու անստարկելի յայտարարութիւններէ վերջ, կրնայինք սպասել, որ Արևմտեան Բիւրօն մեզ հետ ուղղակի բանակցութեան մտնելու իր հաւանութիւնը փութար հազորդել մեզի: Եւ սակայն մեծ եղաւ մեր զարմանքը, տեսնելով որ Արևմտեան Բիւրօն կամաւ չուզէր հասնել մեր ամենապարզ խօսքերը, կը յամառի դարձեալ «Չէզոքի խօսք ընել, «Չէզոքի վերջին խօսք»ին սպասել, «Հետևողականութեան» անակնկալ ու ծիծաղաշարժ առարկութեամբ մը:

Ահաւասիկ բիւրօին պատասխանը.

«Նախ քան ձեզի պատասխանելը հարկ համարեցինք կրկին անգամ դիմել Պ. Մխիթարին, խնդրելով որ անյապաղ հաղորդէ մեզի, քի ուր յանգած է իր միջնորդութեամբ եղած բանակցութեաններու եզրակացութեանը Որովհետեւ բանակցութեաններու յոյրորովիլ նոր ձեւարկի մը դիմելի առաջ, ըստ մեզ, առեղի քանակաւ ու հետևողական ըլլալ կը բռնի հարցը փակել իր սխառ օրինակաւ ձեւակերպութեան մէջ:

«Պ. Մխիթարի մեզի խոստացած եւ դժբաղդարար ցարդ յետաճգած «վերջին խօսքը» ստացուելուն պէս, մենք կը փոքարեմք ձեզի հաղորդել Արեւմտեան Բիւ-

բօյն կարծիքը ձեր առաջարկած ուղղակի բանակցութիւններու առթիւ”:

Այս երկտողը ամէն բան կը պարզէր մեզի: Միանգամ ընդ միշտ հասկցանք, թէ կը գտնուէինք մարդերու առջեւ, որոնց համար անհրաժեշտ յատկութիւններ չեն ուղղամտութիւնն ու անկեղծութիւնը եւ որոնք չեն վարանիր ամէն էնթոփի գիմելու, ամէն կեղծիքի իջնելու՝ խուսափելու համար Միութեան իրականացումէն, այսինքն խուսափելու համար մեր ընդունած և առաջարկած զոհողութիւններէն, զորո գոնէ շակէշիտակ մերժելու համարձակ քաջութիւնն ալ չունին:

«Հետեւողականութեան» խօսք կ'ընէր Արեւմտեան Բիւրօն: Բայց ինչ տեսակ հետեւողականութիւն կրնայ ըլլալ առ, ինչ բանի հետ հետեւողական կուզէր ըլլալ Արեւմտեան Բիւրօն, — իր «Չէզոք»ին ատենէ մը ի վեր խաղացած շիլ կատակերգութեանը հետ, — քանի որ իրապէս բանակցութեան տեղի ունեցած չէր երկու կուսակցութեանց միջեւ, «Չէզոք»ին միջնորդութեամբ:

Արեւմտեան Բիւրօն ինչպէս կը յանդգնի «բանակցութիւն» կոչել անցեալին մէջ իր «Չէզոք»ին մէկ քանի նամակներուն պատասխանի արժանացած՝ ու յետոյ անոր հետ ամէն յարաբերութիւն խզուած ըլլալու պարզան:

Արդեօք «բանակցութիւն» բառով ակնարկել կուզէր Արեւմտեան Բիւրօն կարգ մը այլանդակ նամակներու, որոնցմով իր «Չէզոք»ը վարժուեր էր խելագար հրամաններ, ծիծաղելի օպսոնայիքներ և հիւանդագին նախատիքներ ուղղել պարբերաբար մեր պաշտօնական և աւելի յաճախ մենէ օմանց անհատական հասցէին: Բայց «բանակցութիւն» կարելի է ըսել, քանի մը ամիսն անգամ մը, մեզ զուարճացնել ու մանաւանդ արգահատեցնել հասնող «գիր»երու, որոնց չպատասխանելու օրացաւ խնամքն ունեցած ենք:

Ենթադրենք նոյնպէս որ «Չէզոք»ին մեզի ուղղած ու միշտ անպատասխանի մնացած նամակները նշանակութիւն մը ունեցած ըլլան Արեւմտեան Բիւրօնի համար: Բայց չէ՞ մի որ, բիւրօնի յայտարարութենէն առաջ, Միութեան Խնդիրը հրապարակաւ մեր ձեռք առած առաջին օրէն իօզ, պաշտօնական յայտարարութիւններով, բանակցութեան ամէն կասկած ու ենթադրութիւն միանգամ ընդ միշտ չրած էինք, ու Արեւմտեան բիւրօնի «հետեւողականութեան»՝ առարկութիւնը բերող նամակէն ալ առաջ ո՛ր եւ է չէզոքի հետ, ո՛ր եւ է կապ չունենալին աւելի քան յօտակօրէն շեշտած էինք, 1901 հոկտեմբեր 15, թիւ 20 Նոր կեանքի մէջ հետեւեալ տողերով:

«Մենք Միութեան Խնդիրը ձեռք առինք, առանց ո՛ր և է չէզոքի կամ ենթադրականէ քելադրուած ըլլալու, այլ որովհետեւ օգտակար կը նկատենք Միութեանը յեւթիւտեան գերագոյն տեսակետովը:

«Մեր Միութեան առաջարկը 96էն մինչեւ 1900 տեղի ունեցած անհատական կամ հասարակական տխուր ապարդիան բանակցութեան նկատմամբ ո՛ր եւ է կապակցութեան չունի»:

Դարձեալ նոյն թիւին մէջ:

«Մենք չենք գիտեր չէզոք մը, որոնք բանակցութեան պաշտօն մը յանձնած ըլլանք: Նոյնպէս մեզի իմաց տրուած չէր թէ Արեւմտեան բիւրօն չէզոքի մը պաշտօն յանձնած ըլլայ մեզ հետ քանակեցելու համար:

Արեւմտեան բիւրօն սակայն անգիտանալ կը ձեռացնէ այս բոլորը և թելադրական այլուրութեամբ մը ակնաչնորը խցած՝ կը յամառի միալ իր խուսափուկ ու երկղիմի գիրքին մէջ: Եւ երբ կը օտիպուի վերջապէս բան մը ըսել, պատասխան տալ «ուղղակի բանակցութեան» մեր ուղղակի հրաւերին, ուրիշ բան չի գտներ առաջ քշելու, բայց եթէ հետեւողականութեան ու օրինական ձեւակերպութեան անիմաստ ու անարժան առարկութիւնը:

Բայց աւելին կայ: Արեւմտեան բիւրօնի հետեւողականութեան առարկութենէն աւելի քան ամիս մը առաջ, մեր ընկերներէն մին՝ Բարիզ, պաշտօնապէս, Չէզոքին ալ յայտարարածէր անձամբ, թէ Հնչակեան կուսակցութիւնը Չի կ'ընէր ընդհանրապէս միջնորդութիւնը և թէ Միութեան բանակցութիւնները ուղղակի Դաշնակցութեան վարիչ մարմնոյն կամ անոր կողմէ նշանակուած լիազօրներու հետ պիտի կատարէ, (Տես Նոր կեանք 1901, նոյեմբեր 1, թիւ 21): — Ահա՛ միակ վերջնական խօսքը, զոր «Չէզոք» ը կրնար, եւ զոր արդէն պարտաւոր էր, հազօրդել Արեւմտեան բիւրօնի:

Այս ամենը՝ դարձեալ բիւրօնի հետեւողական նամակէն առաջ՝ բացարձակ պարզութեամբ մը գրած էինք Նոր կեանքին մէջ և հետեւաբար Արեւմտեան բիւրօն տասն անգամ ըլլալով լսած, իմացած էր որ «չէզոք» ի, «ներգործական» ի հետ կապ չունինք, բանակցութիւն չունինք:

Արեւմտեան բիւրօն կարգացած էր, գիտեր մեր այս յայտարարութիւնները: Թէ գիտնալով հանդերձ, կը յամառէր «Չէզոք» ի խօսք ընել, հետեւողականութեան պատրուակին կոթնիլ, պարզապէս՝ միութեան կտրուկ ու վճռական ճամբէն շեղելու, եւ ձգձգուածի միջոցներով Միութեան Խնդիրը մոռցնելու մտահոգութեամբ:

Արեւմտեան բիւրօն իր «հետեւողականութիւնը» պատրուակող երկտողը կը վերջացնէր սա խոստումով:

«Պ. Միսիսարի մեզ խուսառցած և գծադրաբար ցարդ յետաձգած «վերջնական խօսք»ը ստացուելուս պէս, մենք կը փութանք ձեզի հապարդել Արեւմտեան բիւրօնի կարծիքը ձեր առաջարկած ուղղակի բանակցութեան նկատմամբ»:

Այսպէս ուրեմն՝ եթէ Միութեանը կոչուած անհատը

ախտաւոր քմահանոյցով մը, տասը տարի եւս իր պատասխանը ուշացներ, — ինչպէս ուշացուցներ, 'յետաձգեր' է եղեր մինչեւ վերջին օրերս — արեւմտեան բիւրօն՝ հաւատարիմ իր 'հետեւողական' սկզբունքին, հայրենասիրական պարտականութիւն մը պիտի սեպեր տասը տարի եւս սպասել ամբողջ ազգին բաղձացած Միութեան բանակցութիւնը սկսելու համար:

Ու այդ տասը տարուան ընթացքին, նոյն Բիւրօն՝ Հնչակեան Կուսակցութեան ու հայ ժողովուրդին պիտի պատասխանէր, անդադար կրկնելով.

— Սպասեցէք, Մխիթարը 'վերջին խօսք' պիտի գրէ, մենք հետեւողական ենք:

Այս 'հետեւողական' երկտողը՝ անգամ մըն ալ կը հաստատէ Բիւրօնի Միութեան հանդէպ չկամութիւնը:

Յուսախաբուութիւնը արդէն զգուանքի հասած էր մեր ներսիդին: Բայց նորէն, տարապայման խղճահարութեամբ մը, զգուշացանք արեւմտեան բիւրօն ընթացքը որակելէ: Ու սպասեցինք:

Ամիսներ անցան, ու արեւմտեան բիւրօն 'կարծիքը չէր ի դար':

Ու ահա օր մըն ալ Հնչակեան Միութեան իրակահասցումին աւետիոր խոյացաւ ամէն կողմ:

Կացութիւնը յանկարծ փոխուած էր: Պէտք էր, անհրաժեշտ էր Հնչակեան Միութեան յառաջ բերած ժողովրդային փառաւոր խանդավառութիւնը խանգարել, պղծել նկրտիլ, Հնչակեանութեան շուրջը մտքերը պղտորելու ցաւազին ու անզօր փորձն ընել, և Միութենէն իրենց խուսափումը արդարացնելու ճարտարութիւնը՝ աւելն գնով:

'Վերջին խօսքը, ը փոխուած է: Դրօշակ'՝ Յաւելուած, կը հանէ:

Արեւմտեան Բիւրօն ինչպէս կը ներէ ինքզինքին հայ հասարակութեան հրամցնել՝ Հնչակեան Կուսակցութիւնը վարկաբեկելու տարամերժ այլ օրհասական ակնկալութեամբը դուրս տրուած այդ փոխուցը, — եւ ասի՝ այն նամակէն վերջ, որով Հնչակեան Կուսակցութեան կեդրոնական վարչութիւնը աւետած — թերևս գուժած — էր իրեն Հնչակեան Միութիւնը ու ազգարարած՝ թէ ամբողջ Կուսակցութեան քուէով անյապաղ կազմուելիք Հնչակեան կեդրոնին է որ այլ եւս պիտի կրնայ զրկել «ուղղակի բանակցութիւններու» մասին իր խոստացած պատասխանը:

Բայց Արեւմտեան Բիւրօն շատ անար միայն Չէզոքին ատեն ու անարգու օժանդակութեան կառչելով, այլ կը փորձուի — հին, զիւրին ու միամիտ թաքցիլ — բիրտ վերաւորանքներով մեզ զրգոյել, բանակոխ մը ոտեղծել որպէս զի՝ անօր անձնատուր՝ հարկաւորաբար անախորժ ըլլանք իրենց նկատմամբ ու մատակարարենք իրենց, ծանօթ, փնտռուած, սպասուած զէնքը:

— Մեզ կը նախատեն կոր, մեր վրայ կը յարձակին

կոր, ինտո՞ր միանանք ատենց հետ:

Չէ՛, այդ զէնքը չպիտի տանք մենք Արեւմտեան Բիւրօնին, ու մարդկօրէն չպիտի կրնայ ըսուիլ, թէ «Հնչակեանները Միութեան արգելք եղան»: Ասիկա լաւ գիտցած ըլլան: Այդ ձեռնառու պատրուակը, փախուտի այդ հեշտին միջոցը իրենց ընծայելու տենջանքովը չէ որ ամիսներէ ի վեր կուր կուտանք նախատինքներ եւ սպարդուքներ, որոնք կը հասնին մեզի պաշտօնական կամ անպաշտօն, բայց ապահովաբար դրօշակեան օսկանսերէ:

Այս անգամ Դրօշակն է որ աւելի քան պաշտօնապէս բերանը կ'արէ:

«Անմտած յոխորտանքներ, կիրք, քաղաքացիական տհասութիւն, անհրաժեշտ վերապահում, հասկանալի յապաղում» (.) եայլն: Ահա սիրուն փունջ մը զգուական բառերու, զոր Դրօշակ կը նետէ մեր երեսին և որ օտար մանուած չէ անշուշտ խանդաղատագին զգացումներով զգլխելու մեզի:

Արեւմտեան Բիւրօն կրնա՞յ տող մը, բառ մը մատնանիշ ընել մեր յայտարարութիւններուն, յօգուածներուն մէջ՝ որ հեռաւորօրէն կարծնայ արդարացնել իր «յոխորտանք»ի ու «զրգուած»ի մեղադրանքները, կամ որ վերաւորիչ շեշտ մը օւնենայ ո՞ր եւ է յեղափոխական կազմակերպուած մարմինի նկատմամբ:

Շատ զիւրին պիտի ըլլար մեզի ի վեր հանել բովանդակ մաղձը որ կը խտանայ Արեւմտեան Բիւրօնի շնորհալի խօսքերուն եւ շարամիտ ու անազնիւ սպըրդուքներուն մէջ: Պատասխանելու, եւ ջախջախիչ կերպով պատասխանելու, կարելիութիւնը չէ որ մտահոգութիւն պիտի պատճառէր մեզի: Կը կարծենք որ բաւական ապացուցինք մինչեւ հիմա, թէ շիտակ ու օւժով խօսքն ըսելու համար աջէն ձախէն օգնութեան սպասելու պէտք չունինք: Կոխէ փախչողներ ալ չենք: Կ'ընդունինք որ կարելիէն աւելի անյիշաչար ու համբերատար եղանք: Բայց երբ չափը անցնի, երբ Միութեան հարկադրած պարտականութիւնները իրենց սահմանը գտնեն, մենք զիտենք հարուածներուն առջեւ երթալ՝ թո՛ղ անոնք գտնան՝ կողմէն, որոնց դէմ կոչուած ենք կոտիլ և կամ անոնց կողմէն, որոնց հետ պիտի ուզէինք եղբայրաբար քալել յեղափոխական կռիւն ճամբէն:

Հիմա, մենք վճռած ենք մեր սկսած գործը մինչեւ ծայրը տանիլ, ասանց երբէք շեղելու մեր բռնած — այո՛, կը պնդենք — իսկապէս «անշահախնդիր» ու «աներկղիմի» ընթացքէն:

Ու կ'աւելցնենք:

Արեւմտեան Բիւրօն որ այնքան «դէմ ըլլալ» կը յայտարարէ «անմտած յոխորտանքներ» ու, ինչպէս կըրնայ փութկոտութիւնը, խղճահարութիւնն ունենալ յաղթականօրէն հրաաարակելու «գիր»ը, «վերջին խօսք»ը ցաւատանջ մենախաւարի մը, որուն Հնչակեան Կուսակ-

ցութեան հասցէին ուղղամ ծիծաղելի ու պատնալիքները, յուռահատ հրամաններն ու խաւաքարակ շանթերը չեն կրնար ապահովարար «Միութեան բանակցութիւնները վարելու» գերագանց մէթոտը նկատուիլ՝ ն'սխիակ Արևմտեան Բիւրօն:

Բայց տելին կայ: Եթէ Արևմտեան Բիւրօն «վէժ էր» «Միութեան բանակցութիւնները վարելու մեր մէթոտին», կը փափաքէինք, մանաւանդ շատ հետաքրքիր ենք գիտնալ, թէ ո՞րն է արդեօք լաւագոյն մէթոտը, իր մէթոտը: Ինչո՞ւ չըսաւ, ինչո՞ւ չըսէր զայն մեզի ու մանաւանդ ինչո՞ւ ԳՈՐԾԱԴՐՈՒԹԵԱՆ ՁԻՂՆԵՐ ՁԱՅՆ:

Արևմտեան Բիւրօն, որ կը համարձակի կատկածի տակ զնել, Միութեան խնդրին մէջ, ամբողջ յեղափոխական կոտակցութեան մը յայտնած զգացումներուն անկեղծութիւնը, ինչպէս կրնայ զօտահարար ընդունիլ ու հրապարակել անհատի մը ակնկէտերը յայտարարութիւնները, անհատի մը, որ իր համոզումներուն և իր կարծիքներուն մէջ սխալեցաւ արդարացումն ալ չի կրնար ունենալ, որ՝ Միութիւնը վիժեցնելու անարգ գործիքն ըլլալու տրամադիր՝ արդէն իսկ գործիք մըն է սակայն մութին մէջ ծածկուած ու մութէն աւելի սեւ հողինբրու, որոնք չուանը կը քաշեն ու լեզու կուտան այդ խամաճիկին:

Արևմտեան Բիւրօն որ Միութեան առթիւ մեր յայտարարութիւններուն մէջ, հանրային կարծիքը շահախնդրօրէն զրգոնելու գիտում մը կը նկրտի հաստատել ինչպէս անխոհեմութիւնը կունենայ հրատարակելու այդ աւելորդ «յաւելուած»ը, առանց վայրկեան մը անզրդաբանալու, թէ իր այդ արարքը տրամաբանօրէն, մարդկօրէն ուրիշ բանի չի կրնար ծտոյել, ուրիշ նպատակ չի կրնար ունենալ, եթէ ոչ «Հանրային կարծիքը զրգոնել» և վերօտին արծարծել ատելութիւնները, զորս մարելու, թաղելու համար չմասնակցեցաւ՝ սակայն տարիէ մը ի վեր մեր յամսո ու անվհատ ճիգին:

* * *

Կ'ամփոփենք մեր խօսքը:
Եթէ մեր յեղափոխական զգացումները թող տային մեզ Արևմտեան Բիւրօն այս վերջին «մէթոտ»ին հետեւիլ, նիւթը չէ որ փնտոնել, հնարել պիտի օտիպուէինք «յաւելուած»ներով հրապարակը ողողելու համար: Եւ Միութիւնը արգիլելու խնամքով, եթէ տխուր գործիքներ մէջանդ նետելու «քաղաքացիական հասունութեան» զիջանէինք, Միութիւնները չէ որ կը պակօին:
Բայց յեղափոխական կազմակերպութիւնները տարբարութիւնը եւ զանոնք եղբայրաբար կոխի մը զրգելու անարգ մտածումը տեղ չէ՛ ունեցած ու չպիտի ունենայ մեր ջանքերուն մէջ:

Արևմտեան Բիւրօն եթէ ամբողջ Հնչակեան մասնաճիւղերու կողմէն ցոյց տրուած ֆանդամուտութիւնն ու վտահոլութիւնը չի տեսներ, եթէ մեր գրութիւններուն ուղղակի եւ ուղղամտօրէն չուզէր պատասխանել, եթէ՛ կամաւ՝ բարբանջանքներու նախապատուութիւն կուտայ, ապա իր գիտնալիք բանն է:

Բայց յստակօրէն զիտել կուտանք Արևմտեան Բիւրօնին, թէ այդ ճամբան պարկեշտ ու ձեռնտու ճամբան չէ:

Այլ եւս կարելի չպիտի ըլլայ Արևմտեան Բիւրօնին իր երկդիմի ընթացքը շարունակել, մէկ կողմէն Միութեան շերտ փափաքող ձեւանալ ու միւս կողմէն «յաւելուած»ներ հանել, որոնք Միութիւնը վիժեցնելու միայն սահմանուած են:

Հայ ժողովուրդը չպիտի հանդուրժէ սր շարունակեն այդպէս իր ըջին խնդրալ: Պէտք պիտի ըլլայ որ Արևմտեան Բիւրօն իր գիտքը վերջապէս որոշէ: Կամ պիտի ընդունի բացէ ի բաց Միութիւնը կամ պիտի քաշուի թիւնը ունենայ զայն բացէ ի բաց մերժելու: «Յաւելուած»ները ուրիշ բանի չպիտի ծտոյան, եթէ ոչ ժողովուրդին պոտալու Արևմտեան Բիւրօնին անքօղարկելի, անբացատրելի չկամութիւնը:

«Այո՛» կամ «ո՛չ»: Ուրիշ բան չենք հասկնար— ու չենք ալ կրնար մտիկ ընել:

ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ ՆՈՐ ՎԱԼԻՆ

Հեռագիրները ղանուցին, թէ Ֆաիզ Բաշա Տիգրանակերտի Վալի կարգուած է: Սրանտարտի Պոլսոյ լծղթակիցը այս լուրը հաղորդելով իր թերթին, հետեւեալը կը գրէ.

«Ֆաիզ Բաշաի՝ Տիգրանակերտի Վալի կարգուելը հեռագրելով, անցողակի յիշեցի իր շատ ծանօթ նկարագիրը: Տասը տարի առաջ, Մանասթըր այցելութեանս միջոցին, հաւաքած նօթերէս հետեւեալները կը քաղեմ հիմա, ցուցնելու համար թէ ինչ տեսակ պաշտօնեայ մըն է Ֆաիզ Բաշա:

«... Վալի Ֆաիզ Բաշան, եւ իր ստորագրած պաշտօնեաները, մասնաւորապէս Մէհմէտ, Սահապէտտին և Հասան Ապտուլահ, ամէն տեսակ խժոճութիւններ կը գործէին աւազակներ զանելու պատրուակաւ: Հասան Ապտուլահ, Գոթթէֆ անուամբ քրիտոսնեայ մը կը սպաննէ պտղ արինով, կտոր մը հօղի մտսին կօխի մը մէջ: Գոճա անունով դատարակ մը երգում կ'ընէ իր հայրենակիցներուն վրէժը լուծել, և ահա տանջանքները կը սկօին: Վրէժ անողները կը քաշուին գիւղմը,

ուր իրենցմէ մէկը կրակ կ'ընէ զինուորի մը վրայ: Մէկ-
մէտ, թիւրք զինուորներու հրամանատարը, անոնցմէ
շատերը կըսպաննէ, եւ շատերը գերի բռնելով՝ իրեն կը
վերապահէ իր իսկ օուրով անոնց զուգները կտրելու
իրաւունքը:

«... Յետանք նաև անթիւ գժաղզներ որոնք առէն
տեսակ տանջանքներու ենթարկուած էին՝ աւազակնե-
քու հետ իրենց ենթադրեալ մասնակցութեանը համար,
մինչդեռ բուն յանցաւորները կատարելապէս յայտնի ու
ճանչուած էին: Շիքքա Քոմէ անուն մարդու մը եղունգ-
ներուն տակ մարտի կտորներ զամած ու ապա վառած
էին զանոնք, մասները դեռ օտակալի վիճակ մը ունէին: Ճօվան
Չօվան անուն եօթանասուննոց ծերուկի մը ա-
նուիներուն տակ տաքցած քարեր գրած էին, և միտը
այրած հալած էր կողերն ի վար: Փուռ մը պատրաս-
տուած էր ողջ ողջ խորովելու համար Միցա Ճօվանը,
որ յաջողած էր փախչել: Թասա քահանային մօրուքը
ամբողջովին փետտած ու շատ մը կիներ զարհուրելի
կերպով ծեծած ու բանտը գրած էին:

«... Ֆաիզ Բաշաի ամբողջ վարչութիւնը զեղ-
ծումի ու ապականութեանց շարք մըն է, զոր վալիի
դիրքին հասնելն շատ առաջ սկսած էր արդէն: Պուլ-
կարական ապստամբութեան միջոցին, Ֆաիզ Բաշա իռ-
թիպի Մուիթտարըք էր: Անիկա անմիջապէս բանտար-
կել տուաւ Պուլկար շահերով հետաքրքրուող բոլոր
տեղացի վաճառականները: Ի զուր այս վերջիններուն
պատուաւորութիւնը հաստատող ու երաշխաւորող բազ-
մաթիւ ազնուագրեր կը մատուցուէին բարեկամ թիւրք
քաղաքացիներէ, որոնք չի կրցան անոնց ազատութիւնը
ձեռք բերել առանց 3,000 ոսկի վճարելու Մուիթէսա-
րըքին:

Իօթիպի եկեղեցւոյն զուր՝ Ֆաիզ, անամօթարար,
պնակներ կեցուցած էր գրամ ժողովելու համար Մուիթէ-
տարըքին նստիւթութիւններ անունով: Հիմա հոս
(Մանասթըր) մզկիթ մը շինուելու վրայ է, զոր ոմանք
Ֆաիզ Բաշա ճամիտի և ուրիշներ Բասիմ աղա ճամիտի
կ'անուանեն: Թէ ինչո՞ւ այս վերջին անունն ալ կը տրուի
այդ մզկիթին, ահաւասիկ պատճառը. Գասիմ Աղաի որ-
դին կանխամտածուած օպաննութիւն մը գործած ըլլալով
իսկիպի մօտ, հայրը իր զակին ազատութիւնը գնած
է 530 ոսկի վճարելով Ֆաիզի, եւ այդ գումարը գոր-
ծածուած է անոր անունը կրող մզկիթի մը շինու-
թեան:

Արդէն Ֆաիզ Բաշա, կը շարունակէ Սրանտարտի
թղթակիցը, վալիութիւնը ծախու առած էր Տէրվիշ
Բաշան կարեւոր գումարի մը փոխարէն: Կը կարծուի
ընդհանրապէս, թէ այդ գումարը պիտի վճարէր Ֆաիզ
տարեկան 2,000 ոսկիի մասնակի վճարութեամբով:

Գմուար է շիտակը հաւատալ, թէ սուլթանը
անձնապէս ծանօթ ըլլայ թելապրուած ամէն մէկ կա-

ռավարչի կեանքին ու նկարագրին: Բայց և տխրաւ,
վարչական անկումի եւ կառավարական ապականութեան
ամենաողբալի նշան մըն է տեսնել որ Ֆաիզի կեանքը
ապրած անցուցած մարդ մը կարող կըլլայ նոր դիր-
քերու հասնիլ, նոր պաշտօններ ծախու առնել, դեռ
հազիւ ուրիշ պաշտօնէ մը հանուած, վնասուած ըլ-
լալէ վերջ:

Ամենաողբալի ախտանիշ մըն է անշուշտ, երբ Ֆաիզ
իր իբր վալի ընտրութիւնը կը յաջողցնէ, կ'ապահովցնէ
նոյնիսկ Պաշտօններու Յանձնախումբին կողմէն, երբ
այդ Յանձնախումբը կազմուած է այդպիսի գայթակղե-
ցուցիչ ու փաստաւոր պաշտօնավարութիւններ արգիլելու
համար:

Կրնայ ըսուիլ, թէ Յանձնախումբը, դրեթէ իր բո-
լոր անդամներով, համաժիտ չէր Ֆաիզ Բաշաի ընտրու-
թեան, բայց եւ այնպէս յայտնի է թէ չի կրցաւ հակա-
ռակիլ ու յաղթել այն ճնշումին զոր Ֆաիզ ձեռքի տակէ
բանեցուցած էր:

ԹԻԻՐՔԻՈՅ ԶՈՐՍ ԿՈՂՍԸ

ստորագրում

Պալքանեան թերակղզիի արդի խոսվալից կացու-
թեան մասին՝ Կոմս Կոլուխօվօսկիի՝ Աւստրիացի պատ-
ուիրակութիւններու առջեւ ըրած յայտարարութիւնը,
թերեւ բացատրութիւնն ըլլայ այն տակաւին սքողուած
քաղաքականութեան որուն կ'երևի թէ կը հէտելին Ռու-
սիա և Աւստրիա Եւրոպական Թիւրքիոյ մէջ և օրուն
վրայ կը ձեւեն անոնք իրենց բոլոր շարժումները:

«Մեր համաձայնութիւնը Ռուսիոյ հետ, ըսած է
Կոմս Կոլուխօվօսկի, միջօքը եղաւ խաղաղութիւնը պահ-
պանելու Պալքանեաններուն մէջ այս վերջին տարին, երբ
մէկ կողմէն Յեղափոխական Բոսնիաներու բազմա-
պատկուած զործունէութիւնը և միւս կողմէն թրքական
վարչութեան անգոհացուցիչ ընթացքը երկու զօրաւոր
պատճառներ էին ու կրնային, ո՛ր և է առեն, զորս
ծերը շատ անհաճոյ վիճակի մը հասցնել:

«Մեր և Ռուսիոյ կողմէն Պալքանեան Նահանգնե-
րուն եղած կրկնակի ազդարարութիւններուն և թիւրք
կառավարութեան զինուորական պատրաստութիւններուն
հակառակ, Պալքանեաններու վիճակը շտտ անհանդարտ է
տակաւին: Իրաց այդ վիճակին հանդէպ, պէտք է որ
Վիեննաի և Բէթէրսպուրկի Դահլիճները յարատեւ ու
ներդաշնակ միան իրենց ընթացքին մէջ, որպէս զի մի
գուցէ այդ կացութիւնը օրին մէկը դառնայ ըլլայ կա-
նոնաւոր աղէտը մը:

Ռուսիա և Աստրիա, ընդունելով թէ Թիւրքիա իրաւունք և նոյն իսկ պարտականութիւն ունի զինուորական միջոցներ ձեռք առնել, անիշխանական վիճակներ առաջ բերող յեղափոխական ու խռովարարական նպատակներու դէմ, Թիւրքիոյ լմանութիւնը պիտի պահեն: Բայց անոնք պիտի կրնան այդպէս ընել, պայկանաւ որ Թիւրքիա՝ ապստամբութիւններ եւ յեղափոխական զիտումներ հանդարտեցնելու և ճնշելու մէջ՝ տեղի չտայ խժովութիւններու և թէ վերջապէս փոփոխութիւն մը մտցուի վարչական պակասաւոր սիստէմին մէջ: Փոփոխութիւն մը արդարութեան եւ մարդասիրութեան ձգտող, եւ ատիկա ալ ոչ շատ ուշ:

* * *

Երօպական ժամուկին հաղորդած վերջին լուրերուն նայելով՝ Եւմէնի ապստամբութիւնը սկսած է հետզհետէ աւելի սուր ու վրդովիչ կերպարանք մը առնել: Արապ ցեղերու հանդարտ հպատակութիւնը ամենակենսական հարց մըն է Թիւրք կառավարութեան, որովհետեւ իբր քաղաքական եւ կրօնական պետ՝ սուլթանին վայելած բոլոր իրաւասութիւնները մեծաւ մասամբ կը բղխին այն մարտնչութիւնէն, այն տեսակ մը պաշտամունքի հօր կապէն, զոր արապ ցեղերը կը տանեն, կը պահեն հանդէպ խաղիփան:

Սուլթանը՝ իր է՛ն տկար ու վիրաւորելի կողմին վրայ այս յարձակումէն մտահոգ ու տագնապած՝ դէպի Եւմէն ճամբայ հանած է մասնաւոր կրօնական-զինուորական պատուիրակութիւն մը, որ Մախսուտ ընկերութեան Ատանա շոգենաւով, ճամբայ կ'ելլէ դէպի Հիւտէյա, Եւմէնի ներքերը երթալու համար: Այս մասին Մորնիմի Բօստի Վիէննայի թղթակիցը հետեւեալը կը հաղորդէ.

« Հանրաժանօթ պաշտական Եւլիս Էպիլ-Հիւտայի որդի՝ Իւլէմա Հասան Պէյի և զօրավար Մուսթաֆա Բաշայի առաջնորդութեամբ, մասնաւոր պատուիրակութիւն մը մեկնեցաւ Պոլսէն Եւմէն երթալու համար: Այդ պատուիրակութեան նպատակն է ջանալ հանդարտեցնել արապ ապստամբ ցեղապետները, ու՝ շատ մը փայլուն և յանկուցիչ խոստումներով՝ հպատակութեան բերել Եւմէնի ներքերը գտնուող այն արապները, որոնք առեւտրէ մը ի վեր, բացէ ի բաց թշնամական դիրք մը բռնած են հանդէպ կառավարութեան: Այդ տեսակ պատուիրակութիւններ շատ անգամներ զրկուած են Եւմէն, բայց առանց ու և է արդիւնքի: Հասած մասնաւոր լուրերէն դատելով՝ Եւմէնի կացութիւնը շատ աւելի վատթարացած է այս վերջին տարին: Զինուորներն ու կառավարական պաշտօնեաները կը վախնան հեռանալու իբրնց կեդրոններէն: Թղթատարական ու հեռագրական հաղորդակցութիւնը ծայրայեղօրէն անկանոն ու

շատ անգամ օրերով ընդմիջուած է, քանի որ արապները՝ երբ առիթը ներկայանայ՝ սուրհանդակներու վրայ կը յարձակին ու հեռագրական թելերը կը կտրեն: Որքան ատեն Թիւրքերը չեն ձգտիր իրենց իշխանութիւնը Արապներուն վրայ տարածելու և հարկադրելու, ժողովուրդը հանդարտ կը մնայ, բայց երբ Թիւրքերը կը միջամտեն, խռովութիւնն ու արիւնահեղութիւնը անխուսափելի կը դառնայ, ինչպէս պատահեցաւ վերջերս, Եսնայի և Թաազի ճամբուն վրայ ուր Թիւրք զինուորները շատ դժուար ու զէչ վիճակի մը ենթարկուեցան:

Ժամանակէն առաջ տուրքերու հաւաքումն ալ միշտ կը զրգոէ ժողովուրդը: Միւս կողմէ Թիւրք զինուորները, առանց վճարելի և գրեթէ առանց հազուստի ոսնունդի մնացած ըլլալով, չեն քաշուիր երբէք ժողովուրդը կողոպտելէ երբ առիթը գտնեն, ճիշտ ինչպէս պատահեցաւ վերջերս նոյնիսկ Հիւտէյա քաղաքին մէջ: Ընդհանուր կարծիքը այն է թէ Թիւրք կառավարութիւնը պէտք է շատ հեռատես ու լուրջ քաղաքականութեան մը հետեւի, եթէ երբէք կուզուի առաջը առնել 1893ի պատահածին նման ծանր խռովութիւններու եւ ապստամբութիւններու:

ԼՈՒՐԵՐ

ԵՆՄԷՆԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆԸ. — Կ. Պօլսէն Բօլիթիչի Քօռսքօմտեկէցի կը տեղեկացնեն թէ Թիւրք զինուորները ծանր կորուստներ կրած են Եւմէնի ապստամբներու կռիւն մէջ: Կ'ըսուի թէ 300 Թիւրքեր սպաննուած են այն ընդհարումին մէջ որ տեղի ունեցած է Էպ քաղաքը Թաազի սանճագին մէջ:

ԱՊՍՊՐՈՒԱՄ ԶԷՆՔԵՐ. — Պօլսէն թաւ լրագրին կը հաղորդեն, թէ Մալէրի գործարանը մերժած ըլլալով յանձնել 60,000 հրացանները զօր Թիւրք կառավարութիւնը ապստամբ էր Թոթթօլի համար, Գուռ որոշած է զրաւել զանոնց յիշեալ գործարանին Պօլի ունեցած մթերանոցէն:

ԹԱՍՈՍ ԿՂԶԻՆ. — Արշիպիղագոսի հիւսիսային կողմը գտնուող այս կղզին, որ 1841ին Եգիպտոսի փոխ-արքայ Մէհմէտ Ալիի յանձնուած էմ, անկից ի վեր կը կառավարուէր միշտ Եգիպտացի կառավարիչի մը կողմէ: Վերջերս Վէննայէն կը հեռագրեն, թէ հոն տեղի ունեցած են խռովութիւններ, որոնցմէ օգուտ քաղելով Գուռը Թիւրք վարչութիւն մը հաստատած է Եգիպտականին տեղ, եւ այդպիսով իր իրաւասութեան տակ առած կղզին: Թիւրք կառավարիչը իր պաշտօնին զը-

լուխը անցած է այս օրերո և բոլոր եգիպտացի պաշտօնեաներ բացակայած են իր պաշտօնավարութեան ֆէրմանին ընթերցման արարողութենէն: Կ'ըսուի թէ կղզիին ապստամբութիւնը հանդարտեցնելու համար թիւրք ժանտարմաները հարիւր հոգի սպաննած են:

ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՆԱԻԱՐԱՆ.— Պօլսէն կը հաղորդեն, թէ կայսերական նաւարանի աշխատարանները գործադուր բրած են և խմբովին հաւաքուելով Մովսիսի Նախարարութեան Պաշտօնատան առջեւ իրենց յետնեալ թռչակները սկսած են պահանջել: Տեսնելով սակայն, թէ իրենց այս ցոյցը ի նկատի չառնուիր, ցրուած մեկնած են, առանց երթալ իրենց դործերը վերսկսելու:

Վերջին մէկ քանի օրերու ընթացքին բազմաթիւ ձերբակալութիւններ եղած են Պօլսո օրոնց բուն պատճառը տակաւին չի գիտցուիր թէ ի՞նչ է:

ԸՆԴՀԱՐՈՒՄ ՄԸ.— Վիեննաէն կը հաղորդեն, թէ Մոնթենեկրոյի և թիւրք զօրագունդերու միջեւ ընդհարում մը տեղի ունեցած է սահմանազխիսն վրայ ֆօտկօրիցաի մօտերը:

ԱԼՊԱՆԱՑԻ ՅԵՂԱՊԵՏՆԵՐ.— Տիացօվաի խռովութիւնները առժամապէս վերջ գտան, կը գրէ թալաշի թղթակիցը, ցեղապետ Րիզա պէյի՝ ուրիշ ցեղապետի մը՝ Պայրամ Սիւրաի վրայ տարած յաղթութեամբ: Րիզա պէյ Տիացօվաէն դուրս քշած է Պայրամը ու անոր ցեղակիցները, ու այրել տուած է անոնց բոլոր տունները: Միւս կողմէն, Պայրամ՝ կրկին ժողոված ու պատրաստած է իր մարդերը, վրէժ լուծելու համա: Երկուրդ Գէօշիի ալպանիացիներուն մեծ մասը Պայրամ Սիւրաի ցեղին կը պատկանին, հետևաբար շատ հետաքրքրական պիտի ըլլայ տեսնել թէ Պալատն ու իշխանութիւններն ինչ դիրք պիտի բռնեն ներկայ կացութեան հանդէպ, և թէ պիտի ուզեն առաջն առնել նորանոր ընդհարումներու:

— Պօլսէն կը հաղորդեն, թէ հետեւակ զինուորներու գունդ մը զրկուած է Եանինաէն Ալվոնա, Ալպանիոյ ծովեզրին վրայ, ուր շատ մը ուրիշ պաշտպանողական միջոցներ ձեռք առնուած են: Այս պատրաստութիւններուն շարժառիթը կը կարծուի այն լուրը, ըստ որում ալպանացի թեկնածու մը՝ խուսք մը կարիպալտեաններու զուխը անցած՝ ծրագրած է ոտք դնել ալպանական հողի վրայ եւ սկսել ընդհանուր ապստամբական շարժում մը առաջ բերել Ալպանիացիներուն մէջ:

ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԸ.— Այն բազմաթիւ հայերը, որոնք՝ 1894 և 1895ի շարդերէն յետոյ՝ Ռուսիա ապաստանեցան և որոնք չեն ուզեր ուրս հպատակութիւնը ընդունիլ, սկսած են սահմանազխուիւր անցնիլ յուսալով վերադառնալ իրենց բնիկ գիւղերը:

Թիւրք իշխանութիւնները, սակայն, ձերբակալած են մինչեւ հիմա հասնող բոլոր գաղթականները ու

սահմանազխի քաղաքներու բնաւերը լեփ լեցուց են գաղթականներով:

ՆՈՐ ԽՍՏՈՒԹԻՒՆՆԵՐ.— Տիւրի Քրօնիկի Պօլսոյ թղթակիցը հետեւեալը կը հաղորդէ.

«Վերջերս որոշուած ու հրապարակուած են հոս խել մը անտանելի խստութիւններ, որոնք զինուորական ու քաղաքական բոլոր շարքերուն մէջ գժգոհութիւն յառաջ բերած են: Չինուորականներուն արգիլուած է սրճարաններ ու զարեջրատուններ մտնել, որովհետեւ հոն անոնք շիման կուզան եւրօպացիներու հետ, կը կարգան օտար թերթեր, քաղիով անոնցմէ այնպիսի գաղափարներ, վտանգաւոր ու խռովարարական նըկատուած են:

«Կառավարական բարձրաստիճան պաշտօնեաներ ալ արտօնուած չեն կղզիները ու Մարմարայի շուրջը գտնուող արուարձանները բնակիլ, որովհետեւ կը կարծուի թէ այդ տեղերէն զիւրին է անցնող շոգնաւաներն երթալ ու փախիլ: Չուկ որսալու արտօնութիւն ալ կը մերժեն տալ թէ՛ բնիկներուն և թէ՛ օտարներուն, բացի անշուշտ այն բնիկներէն, որոնք արհեստով ձրկնորներ են արդէն: Այս խստութեան ալ շարժառիթը նսրէն այն վախն է, թէ ծովուն բացերը կարենալ ելլելը կը դիրացնէ դժգոհներու փախուստը:

«Պետութիւնները բողոքած եւ զեպանատուններու ու Գրան միջեւ ծանուցագրեր փոխանակուած են եւրօպացիներու զէմ ձեռք առնուած այս արգելքի մասին, քանի որ ատիկա հակառակ է Տաճկաստանի մէջ օտարապալտակներու դաշնագրութեամբ վայելած առանձնաշնորհումներու իրաւունքին: Տակաւին խնդիրը չէ կարգադրուած, թէ և այս արգելքին գործադրութեան թուականը շուտով մօտենալու վրայ է»:

ՀԱՍՅԷ

«ՆՈՐ ԿԵԱՆՔ»ի վերաբերեալ նամակ ու բանասիրիկ զրկիլ հետեւեալ հասցէին.

REDACTION DU "NOR-GUIANK",
27, BATHURST GARDENS,
KENSAL RISE,
(ENGLAND.) LONDON, N.W.

ՆՈՐ ԿԵԱՆՔը կը հրատարակուի ամէն ամսու 1ին ու 15ին: Բաժնեգիրն է Եւրոպայի համար տարեկան 10 և վեցամսեայ 5 ֆրանք, Ամերիկայի համար տարեկան 2 և վեցամսեայ 1 տղար: